



10-11(649-650)

04.04.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուբին եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՈՐ ՇԵՐՈՍԱՃՄԱՆ

1991 թվականի գարնանը և հետայդու՝ ռուսական (խորհրդային) բանակի անմիջական օժանդակությամբ հայազրկվեցին հայաշունչ Գետաշենի եմթաշրջանը, Շահունյանի շրջանն ամբողջությամբ, Մարտակերտ քաղաքն ու շրջանի մեծ մասը, Հաղրուքի և Ասկերանի շրջանների բազմաթիվ բնակավայրեր: Շուշին, ցավոք, մինչ այդ էլ ազերիների ձեռքին էր, հավելյալ այն մյուս ռազմական հենակետերը, որոնք բնակավայրի անվանումներ ունեին՝ Մալիբեկլի, Կրկժան, Քյոսալար, Խոջալու, Ջանհասան, Լեսնոյե և այլն:

1992-ի ձմռանը Ստեփանակերտում տեղակայված ռուսական (խորհրդային) 366-րդ գունդը լքեց Ստեփանակերտը՝ իր հետ տանելով սպառազինության հիմնական մասը: Բզկտված, անզեն, պաշարված Արցախը մնաց միայնակ մինչև ատանները զինված ազերական բանակի դեմ: Եվ թե ինչ եղավ հետո, բոլորիս է հայտնի. մեզանից շատերն ականատեսն ու մասնակիցը դարձան հայոց զորական ուժի անկասելի հաղթարշավի:

Շուրջ երեսուն տարի անց թուրքաջիւղական ուժերի աջակցությամբ Ադրբեջանը ոչ միայն հետ ստացավ առաջին պատերազմում կորցրած յոթ շրջանները, որոնք Արցախի Հանրապետության համար անվտանգության գոտի էին համարվում, այլև տիրացավ ԼՂՀ վարչական տարածք հանդիսացող Շուշի քաղաքին, Հաղրուքի շրջանին ամբողջությամբ, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների մի շարք գյուղերի... Եվ կրկին տարածաշրջան մտան ռուսական զորքերը՝ այս անգամ հակամարտող կողմերին խաղաղեցնելու առաքելությամբ:

Մինչև ե՞րբ կմնան խաղաղարարներն Արցախում, և արդյո՞ք նրանք կհեռանան եռակողմ համաձայնեցված հնգամյա ժամկետը լրանալուց հետո: Խաղաղապահ զորակազմի հրամանատարությունն այս կապակցությամբ ոչ միանշանակ մեկնաբանություն է տալիս՝ շեշտելով, որ ամեն ինչ կախված է տարածաշրջանում տիրող իրավիճակից ու երեք երկրների քաղաքական ղեկավարության դիրքորոշումից: Իսկ այդ ընթացքում Ադրբեջանը «սողացող պատերազմի» սկզբունքով համառորեն խցկվում է Արցախի Հանրապետության տարածք՝ օկուպացման թոկն ավելի ու ավելի կարծացնելով:

Ոչ մեկը չի կարող վստահաբար պնդել, որ խաղաղապահներն, այնուամենայնիվ, մի օր հեռանալու են տարածաշրջանից, ու դարձյալ մնալու ենք ազերական հրոսակների դեմ-հանդիման: Դառը փորձն ու գոյաբանական բնագրը հուշում են, որ պետք է հետևողականորեն պատրաստվել նոր հերթացման: Երեք տասնամյակ առաջ մենք միասնական էինք, վճռական, անվեհեր: Հիմա էլ պարտավոր ենք այդպիսին լինել, որովհետև միջավայրը, պայմանները, իրավիճակն ու մոտիվացիան դարձյալ նույնն են: Հավատանք՝ նոր սերունդը ևս հաղթանակներ կելու ներուժ ունի: Եվ հիշենք՝ սատանան այնքան էլ սարսափելի չէ, որպիսին նրան ներկայացնում են:

«ԼՍՏԱՐԱՐ»

## «ԱՂԵՂՆԱԿՈՐ ՀԱՅԿԸ»՝ ՏԱՐՎԱ ԼԱԿԱԳՈՒՅՆ ԱՃԽԱՏԱՆՔ



Չնայած լարված իրավիճակին՝ մարտի 29-ին «Պուլ էլյուարի տուն-Ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ում իշխում էին պայծառ գույներն ու ազգային շունչը: Ստեփանակերտի և շրջանների մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սաներն էին բերել՝ մասնակցելով ԱՀ ԿԳՄՍՆ կազմակերպած ձեռքի աշխատանքների ցուցահանդես-մրցույթին, որը նվիրված էր Մայրության և գեղեցկության օրվան: Մեծերին այստեղ էր բերել երեխաներին բերկրանք պատճառելու և ինչու չէ, նրանցից դրական լիցքեր ստանալու, լարվածությունն իրենցից թթափելու ցանկությունը: Անկասկած, միասին հեշտ է հաղթահարել անկայուն հոգեվիճակը և ավելի ապահով զգալ:

Մրցույթի հանձնախմբի անդամները դժվար ընտրության առաջ էին կանգնած. ՄՊՍԿ-ի տաղավարներից ընտրել իրենց առանձնահատկությամբ տարբերվող լավագույն աշխատանքը՝ տեղավորվելով նախատեսված վեց անվանակարգերում: Իսկ այդ աշխատանքները բազմաթիվ ու բազմապիսին էին:

Մինչ համձնախմբում տաղավարները շրջելուց հետո առանձնացել էր՝ ի մի բերելու արդյունքները, ՄՊՍԿ-ները հանդես եկան համերգային ծրագրով՝ ասմունք, երգ-պար, «Գարնանային շունչ» նորածնության ցուցադրություն:

Վերջապես հասնում է արդյունքների ամփոփման պահը: Համձնախմբի անդամներից նկարիչ-քանդակագործ Յուրի Դով-հաննիսյանը նախ շնորհավորում է միջոցառմանը ներկա գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին, Արցախի կանանց՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ՝ նշելով, որ ոչ մեկը մեզ չի արգելի առավելագույն ցանկությունը մաղթել հերոսածին մայրերին, հայ կնոջը: Նա հայտնեց համձնախմբի միածայն որոշումը. օրվա խորհրդից ելնելով՝ «Հրաշագեղ հայուհի» մրցանակը շնորհել Ասկերանի ՄՊՍԿ-ին:

Խոսքն այնուհետև փոխանցվում է համձնախմբի նախագահ՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանին, որը նախ գնահատանքի խոսք է ասում երեխաների հետ աշխատող նվիրյալ ուսուցիչների հասցեին. «Ես ծանոթ եմ մեր ՄՊՍԿ-ների աշխատանքներին և միշտ

էլ ականատես եմ եղել, թե ուսուցիչներն ինչպիսի ջանասիրությամբ ու նվիրումով են մշտապես լծված այդ աշխատանքին: Իսկ երեխաների հետ աշխատանքը երկի

«Տարվա հայտնություն» մրցանակը հանձնեց Հաղրուքի ՄՊՍԿ տնօրենին՝ «Դիզափայտի ծաղիկները» աշխատանքի համար՝ շնորհակալություն հայտնելով գաղափարի և այն նման ձևով արտացոլելու համար:

Դրան ի պատասխան ՄՊՍԿ տնօրեն Իրա Թանրազյանն ասաց. «Մենք երեխաների հետ կանենք այն ամենը, որպեսզի միշտ մնանք մեր հողում, մեր երկիրը պահենք այս ձևով, և թող մեր թշնամին տեսնի, որ նույնիսկ Հաղրուքն է այստեղ և արժանանում է մրցանակի»:

Ստեփանակերտի ՄՊՍԿ-ն միշտ էլ իր բարձրության վրա է. «Նրա տաղավարը նույնպես հագեցած է և բավականին բարձրաճաշակ: Այնքան տարաբնույթ են աշխատանքները, որ շատ մեծ դժվարության առաջ էինք կանգնած, թե այս կենտրոնի կոնկրետ որ աշխատանքն արժանացնեք հատուկ գնահատանքի: Արվեստը կիրառական նշանակությամբ կիրառելու այս գաղափարն է արտացոլված ձեր տաղավարում». Մ. Բալայանն այս խոսքերից հետո Ստեփանակերտի ՄՊՍԿ-ին հանձնեց «Տարվա նորարարություն» մրցանակը:

Առանց հուզմունքի դժվար էր տեսնել Շուշիի ՄՊՍԿ երեխաների աշխատանքները և լսել նրանց ելույթները: Նրանց աշխատանքներում չկա կորուսյալ հայրենիքի գաղափարը: Ընդհակառակը, ամեն ինչ խոսում է այն մասին, որ Շուշին հայկական է, և մնալու է հայկական: «Ազգային շունչ» մրցանակը բաժին հասավ Շուշիի ՄՊՍԿ-ին:

Մարտունու ՄՊՍԿ-ի տաղավարն արտացոլում էր այստեղ ջանասիրաբար կատարված հետաքրքիր աշխատանքները: Համձնախմբի նախագահն առանձնացրեց հատկապես նրա ասեղնագործությունները և



ամենաշնորհակալ, ամենագնահատելի գործն է»: Համձնախմբի նախագահի խոստովանությամբ՝ իրենց համար դժվար էր ընտրություն կատարել, քանզի ներկայացված բոլոր աշխատանքների մեջ ներդրված էին սեր, ազգային շունչ, և նախատեսված անվանակարգերը չէին արտացոլում աշխատանքների իրական ծավալը: Եվ շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին մեծածավալ աշխատանք կատարելու համար:

Հերթով բնութագրելով յուրաքանչյուր տաղավարի առանձնահատուկ կողմը՝ համձնախմբի նախագահը նրանց հանձնեց համապատասխան մրցանակը:

Առաջինը խոսելով Հաղրուքի ՄՊՍԿ-ի մասին՝ ասաց. «Նրանց աշխատանքները մատնացույց են անում, որ ճակատագրի բերումով գրկվել են իրենց հայրենիքից, բայց ապրում են իրենց հայրենիքում, շնչում են իրենց հայրենիքի՝ Հաղրուքի օդը: Հաղրուքի ծաղիկներն ենք տեսնում, սա ուղղակի հոգու չափ խոցեց մեզ»: Նա



կոմպոզիցիաները՝ հանձնելով «Ինքնատիպ տաղավար» մրցանակը:

Մարտակերտի ՄՊՍԿ տաղավարից համձնախմբին ամենից շատ տպավորել է Հայկ Նահապետի խրոխտ պատկերով գոբելենը: Լայնալիծ աղեղը ձգած Հայկը այս օրերին չէր կարող վրիպել ոչ մեկի ուշադրությունից, քանզի, ինչպես Մ. Բալայանն ասաց, այսօր Հայկի կերպարը շատ ենք զգում մեր կողքին: Բնականաբար, այդ աշխատանքը մեկ օրվա գործ չէ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

# ՏԵՐԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մարտի 29-ին Համազգային հայ կրթական և մշակութային միության, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում կայացավ «Կրթամշակութային կյանքն Արցախում» խորագրով գիտաժողովը: Այն ի սկզբանե նախատեսված էր կազմակերպել Արցախում, սակայն Փառուխի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ գիտաժողովն անցկացվել է Երևանում: Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, Արցախի ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, Համազգային հայ կրթական և մշակութային միության ԿԿ ատենապետ Մկրտիչ Մկրտիչյանը և Համազգայինի երևանյան գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանը: Կարևորելով նման գիտական համաժողովների անցկացման դերը՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը իր խոսքում մասնավորապես նշել է.

«Արցախի հայությունը հայտնվել է պատմության ճակատագրական փուլերից մեկում: Աննախադեպ սպառնալիքներ են ստեղծվել Արցախի Հանրապետության անվտանգության համար: Արցախը համաքրիստոնեական սրբավայր է իր հնամենի վանքերով ու եկեղեցիներով, խաչքարերով ու գրչության կենտրոններով, մշտոցագիր մատյաններով, ուխտավայրերով ու ամրակառույց բերդերով: 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախն ունեցավ բազում մարդկային զոհեր և վիրավորներ, մեծ կորուստներ հայրենիքի մեծ մասը, հակառակորդի վերահսկողության տակ անցան 139 եկեղեցի, 14 վանք, 16 մատուռ և 14 սրբատեղի: Նման համազգային գիտական համաժողովները կնպաստեն Արցախի մշակութային ժառանգության պահպանմանը, կօգնեն վեր հանել ոլորտի արդի մարտահրավերներն ու լուծման ուղիներ գտնել:»

«Արցախի բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության կորուստները և նրանց պաշտպանության հիմնախնդիրները» թեմայով ելույթ ունեցավ Արցախի ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննիսյանը: Արցախից հեռավոր տեսակապով ելույթ ունեցան նաև ԱՀ նախագահի՝ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով խորհրդակցության Արմեն Սարգսյանը, Լուսինե Ղարախանյանը, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության կենտրոնի ղեկավար Յովիկ Ավանեսովը: Գիտաժողովին մասնակից՝ գիտության և մշակույթի ծանաչված գործիչներն անդրադարձան այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ «Կրթամշակութային կյանքն Արցախում», «Ադրբեջանի կողմից կիրառվող մշակութային եղեռնագործ քաղաքականության շարունակական գործողություններն Արցախում», «Արցախի ազգաբնակչության պատկերը», «Հայկական մշակութային ժառանգության յուրացման քաղաքականությունը 1991-2019 թթ.» և այլն: Հա-

մազգային հայ կրթական և մշակութային միության երևանյան գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանը ցավով նշեց, որ չեն կարողացել այս միջոցառումն անցկացնել Արցախում: «Այս և նմանատիպ գիտաժողովներն առիթ են՝ կրկին վերաբերելու մեր պատմության հուշվույթի կարևոր հանգրվանները, նվաճումներն ու ձեռքբերումները: Տարբեր ձևաչափերով ոչ միայն հայ հանրությանը, այլև միջազգային ասպարեզում Արցախի պատմությանը, նրա ազգային, հոգևոր ու մշակութային ինքնությանն անդրադառնալն այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է: Մենք պարտավոր ենք տեր կանգնել մեր պատմական իրավունքներին, քանի դեռ ուշ չէ: Հայկական քաղաքակրթական արժեքները մեր լինելության բանաձևն են: Մենք պարտք ու պարտականություն ունենք մեր անցյալի հանդեպ», - ասաց Ռ. Առաքելյանը:

ԱՀ ԿԳՄՍ

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԿՈՐ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐՈՒԺԻ ՄԵԿՏԵՂՈՒՄ. ՆԱԵՎ ԱՅՄՊԵՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՓՐԿԵԼ ԳԱԼԻՔ

Մարտի 13-19-ը աշխատանքային այցով Ֆրանսիայում էին ԱՀ նախագահի խորհրդակցանքեր Լուսինե Ղարախանյանը և Ազատուհի Սիմոնյանը: Այցի մանրամասները շուրջ գրույցները Լ. ՂԱՐԱՍԻՄՅԱՆԻ հետ:

**- Համազգայինի տեղյակ ենք, որ Ձեր այցի գլխավոր նպատակը Արցախի օկուպացված տարածքների պատմամշակութային և պատմաարտապետական ժառանգության լուսանկարների ցուցահանդեսին մասնակցելն էր: Մանրամասներ, խնդրենք, ինչպես անցավ ցուցահանդեսը:**

- Նախ ասեմ, որ այն կազմակերպվել է ԱՀ ԿԳՄՍ-ի և Ֆրանսիայի «Արևելյան քրիստոնյաներ» կազմակերպության համատեղ ջանքերով: Ցուցահանդեսը եղել է երեք քաղաքներում՝ Փարիզում, Լիոնում, Ալֆովիլում: Մենք մասնակցել ենք մարտի 15-ին Ալֆովիլում կազմակերպված ցուցահանդեսին, որին ներկա են եղել Ֆրանսիացի պատգամավորներ, քաղաքապետը: Ի դեպ, վերջինս շատ ազդեցիկ խոսք է ասել, նաև գրառում առել իր ֆեյսբուքյան էջում, որ չի կարելի Արցախի և Ուկրաինայի դեպքերի միջև տարբերություն դնել. անտարբեր լինել 44-օրյա պատերազմում Արցախում կատարվածի և այդքան մտահոգ լինել ուկրաինական դեպքերի նկատմամբ: Ցուցահանդեսը շրջագայելու է Եվրոպայի տարբեր երկրներում, և հույս ունենք, որ այն կնպաստի եվրոպական հանրությանը իրական պատկերացում կազմելու Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության մասին:

**- Ձեր գրառումներից տեղեկացել ենք նաև, որ հանդիպումներ եք ունեցել կրթամշակութային, հոգևոր և հասարակական կազմակերպությունների հետ: Այդ մասին, խնդրենք:**

- Այցելել ենք Ֆրանսիայում գործող չորս հայկական դպրոցներ, որոնցից մեկը՝ Սևրի շատ հզոր կրթօջախը, դատական դեպքերով պայմանավորված, ժամանակավոր չէր աշխատում: «Զուրկ դպրոցներ» ծրագրի շրջանակներում երկու դպրոց կապել ենք Ստեփանակերտի հ. 1 հիմնական և ճարտարի Ազատամարտիկների անվան հ.1 միջնակարգ (հոսքային) դպրոցների հետ: Շատ ազդեցիկ է Փարիզում գործող «Դպրոցասեր» վարժարանը, որն ունի ավելի քան 140 տարվա պատմություն և ուր հաճախում է 240 աշակերտ: Դպրոցը, առաջնորդվելով Ֆրանսիայի կառավարության նախկին արտաքինի և հիմնական դպրոցի ծրագրերով, ուսուցանում է նաև հայ գրականություն, հայոց լեզու, հայոց պատմություն, հայ երգ ու պար, թատրոն, վայելչագրություն, հայկական մշակույթ: Պատկառելի տարիք ունեցող այս կրթօջախի տարիքին է «Դպրոցասեր կանանց

ընկերությունը», որը գումար հանգանակելով՝ ապահովում է հայ երեխաների հայեցի կրթությունն ու դաստիարակությունը:

Երկրորդ մեծ դպրոցը, որ այցելեցինք, Ալֆովիլի «Գեորգ Գ. Արապեան» վարժարանն է, որն ունի 300-ից ավելի աշակերտ: Իրականացնում է հիմնական կրթության ծրագրեր:

Փարիզում մեր հանդիպման հաջորդ հասցեն Հայ Կաթողիկե եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդարանն էր: Ազգապատ գործունեություն ծավալող Հայ Կաթողիկե եկեղեցին իր ներկայությունն ունի Ֆրանսիայի մի շարք քաղաքներում, որի շուրջ համախմբված են համայնքի հետևորդները: Թեմի առաջնորդ Գերապայժառ Եղիա եպիսկոպոս Եղիայանը հետաքրքրվեց հետմատերազմյան Արցախի կյանքով, մեր ծրագրերով, և դարձյալ իր զորակցության ու քաջակերպությանը խոսքն ու օրհնությունը փոխանցեց արցախահայությանը՝ միասին հայ ազգի պատմության այս հանգրվանը ևս պատվով հաղթահարելու աղոթքով:

Հանդիպումների շարքում էր Ֆրանսիայի Հայ Ավետարանչական եկեղեցին: Պատկառելի են Արցախի համար կատարած և այն ծրագրերը, որոնք հանձն են առել այստեղ կատարել: 175-ամյա եկեղեցու ծառայության հավատքն անխախտ է: Այսօր մեր շարունակում է առաջնորդի ուժ լինել հատկապես կրթական ու հոգևոր դաշտում: Հայ եկեղեցին համայնքի պահպանման ուժեղ մեխանիզմն է: Բոլոր եկեղեցիներին մենք Արցախի համար ծրագրեր ենք առաջարկել և հոգեբանական աջակցության, և Գիտական կենտրոնի համար սարքավորումներ, և Մարտունու արիեստագործական ուսումնարանի համար հաստցների ձեռքբերման հարցով:

Հանդիպել ենք SPFA-«Ֆրանսիա-Հայաստան բողոքական համերաշխության կազմա-

կերպություն» բարեգործական ՀԿ-ի հետ, որի իրականացվելիք ծրագրերից է՝ Արցախի գյուղերում գնել բնակարաններ, վերանորոգել, կահավորել ու նվիրել բազմազավակ ընտանիքներին: Երկու տան գնման գործընթաց հիմա գնում է: Կազմակերպության նախագահ Ջանիկ Մանիսյանի հետ քննարկել ենք աջակցել Գիշու, ճարտարի հ.3 և Դուզե ճարտարի հիմնական դպրոցներում «Երկարօրյա դպրոց» ծրագրի ներդրմանը:

Հետաքրքիր էր հանդիպումը Ֆրանսիայի ՀՕՄ-ի և Համազգային հայ կրթական ու մշակութային կազմակերպությունների կանանց հետ: Նրանք համախմբում են աշխարհով մեկ սփռված գրեթե երկու տասնյակ հազարին հասնող բարեգործ, զաղափարական հայ կանանց ուժերը: Այս նվիրյալ ու պատկառելի կանայք միմյան մի նպատակ ունեն՝ շարունակել պայքարել միասնական հայրենիքի հզորացման համար:

**- Ինքներդ ինչպե՞ս կզննահատեիք Ձեր այցը:**

- Բոլոր հանդիպումները համարում ենք արդյունավետ: Ազատուհի Սիմոնյանը հիմնականում Հուլիի շրջանի գյուղերը կենտունակ դարձնելու հարցն է դրել, իսկ ես՝ կրթական համակարգի: Իմ երազանքն է Արցախում գրավիչ կրթագիտական միջավայր ստեղծել: Մեր դիտարկումներն ի ցույց են անում, որ աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում և Ֆրանսիայում հայ մտավորականները, արվեստագետները, գիտնականները ընդգրկված են ակադեմիական հաստատություններում, ինչպես նաև վերլուծական կառույցների՝ ուղեղային կենտրոնների գործունեության մեջ, որոնք տվյալ երկրի գործնական քաղաքականության վրա ունեն անմիջական ներգործություն: Այս առումով պետք է սփյուռքի գիտափոր-

բեր մենք հարցրինք, թե ինչ կարող ենք անել նրանց համար, ասացին, որ հայոց պատմության ուսուցիչը, որն ընդհանուր պատմության մասնագետ է, կարիք ունի գիտելիքների խորացման: Մենք ընտրել ենք ճարտարի դպրոցը, որ նրա մասնագետը առջանց դասընթացներ վարի:

Այցելել ենք նաև «Թարգմանչաց» դպրոց, որն ընդգրկում է մանկապարտեզից մինչև հիմնագործ դասարան:

Մեծ ու ծանր աշխատանք է պահանջվում սփյուռքի երրորդ և չորրորդ սերնդի ինքնությունն ու հայոց լեզվի իմացությունը պահպանելու համար: Հայրենիքից դուրս բազմաշերտ, բազմադեմ ու բազմակարծիք այս երկրում հայկական դպրոցներն իրականացնում են այդ զննահատելի աշխատանքը:

Ֆրանսիայի հայ հոգևոր իշխանության հետ նույնպես հետաքրքիր հանդիպումներ ենք ունեցել:

Այցելել ենք Հայ Առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդարան և պատիվ ունեցել հանդիպելու Ֆրանսիայի թեմի նորընտիր առաջնորդ՝ հոգեշնորհ Տեր Գրիգոր Վրդ. Խաչատրյանի հետ: Շնորհավորելով Սրբազան հորը թեմի առաջնորդ ընտրվելու առթիվ՝ փոխանցել ենք ԱՀ նախագահի ողջույնի, շնորհավորանքի խոսքերը և նվերը՝ Գանձասարի արծաթյա մանրակերտը: Սրբազան հայրը տեղյակ է Արցախում կատարվող իրադարձություններին և նաև տեղեկատվություն տվեց Ֆրանսիայի հայոց թեմի գործունեության, կատարածի և անելիքների, ֆրանսահայ համայն-



սիայի Հայ Ավետարանչական եկեղեցին: Պատկառելի են Արցախի համար կատարած և այն ծրագրերը, որոնք հանձն են առել այստեղ կատարել: 175-ամյա եկեղեցու ծառայության հավատքն անխախտ է: Այսօր մեր շարունակում է առաջնորդի ուժ լինել հատկապես կրթական ու հոգևոր դաշտում: Հայ եկեղեցին համայնքի պահպանման ուժեղ մեխանիզմն է: Բոլոր եկեղեցիներին մենք Արցախի համար ծրագրեր ենք առաջարկել և հոգեբանական աջակցության, և Գիտական կենտրոնի համար սարքավորումներ, և Մարտունու արիեստագործական ուսումնարանի համար հաստցների ձեռքբերման հարցով:

Պատկառելի են Արցախի համար կատարած և այն ծրագրերը, որոնք հանձն են առել այստեղ կատարել: 175-ամյա եկեղեցու ծառայության հավատքն անխախտ է: Այսօր մեր շարունակում է առաջնորդի ուժ լինել հատկապես կրթական ու հոգևոր դաշտում: Հայ եկեղեցին համայնքի պահպանման ուժեղ մեխանիզմն է: Բոլոր եկեղեցիներին մենք Արցախի համար ծրագրեր ենք առաջարկել և հոգեբանական աջակցության, և Գիտական կենտրոնի համար սարքավորումներ, և Մարտունու արիեստագործական ուսումնարանի համար հաստցների ձեռքբերման հարցով:

Հանդիպել ենք SPFA-«Ֆրանսիա-Հայաստան բողոքական համերաշխության կազմա-

կերպություն» բարեգործական ՀԿ-ի հետ, որի իրականացվելիք ծրագրերից է՝ Արցախի գյուղերում գնել բնակարաններ, վերանորոգել, կահավորել ու նվիրել բազմազավակ ընտանիքներին: Երկու տան գնման գործընթաց հիմա գնում է: Կազմակերպության նախագահ Ջանիկ Մանիսյանի հետ քննարկել ենք աջակցել Գիշու, ճարտարի հ.3 և Դուզե ճարտարի հիմնական դպրոցներում «Երկարօրյա դպրոց» ծրագրի ներդրմանը:

Հետաքրքիր էր հանդիպումը Ֆրանսիայի ՀՕՄ-ի և Համազգային հայ կրթական ու մշակութային կազմակերպությունների կանանց հետ: Նրանք համախմբում են աշխարհով մեկ սփռված գրեթե երկու տասնյակ հազարին հասնող բարեգործ, զաղափարական հայ կանանց ուժերը: Այս նվիրյալ ու պատկառելի կանայք միմյան մի նպատակ ունեն՝ շարունակել պայքարել միասնական հայրենիքի հզորացման համար:

**- Ինքներդ ինչպե՞ս կզննահատեիք Ձեր այցը:**

- Բոլոր հանդիպումները համարում ենք արդյունավետ: Ազատուհի Սիմոնյանը հիմնականում Հուլիի շրջանի գյուղերը կենտունակ դարձնելու հարցն է դրել, իսկ ես՝ կրթական համակարգի: Իմ երազանքն է Արցախում գրավիչ կրթագիտական միջավայր ստեղծել: Մեր դիտարկումներն ի ցույց են անում, որ աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում և Ֆրանսիայում հայ մտավորականները, արվեստագետները, գիտնականները ընդգրկված են ակադեմիական հաստատություններում, ինչպես նաև վերլուծական կառույցների՝ ուղեղային կենտրոնների գործունեության մեջ, որոնք տվյալ երկրի գործնական քաղաքականության վրա ունեն անմիջական ներգործություն: Այս առումով պետք է սփյուռքի գիտափոր-

ծագիտական հնարավորությունները սկսեն նյութականացվել: Հիմնվեն համահայկական-նազմավարական ուղեղային կենտրոններ, որոնք փոխգործակցության արդյունավետ ձևեր ու մեխանիզմներ կմշակեն և անմիջական ազդեցություն կունենան մեր երկրի ներկայի ու ապագայի վրա:



ՉՊԵՏՔ Է ԼՈՆԵԼ

ՓԱՌՈՒԽ-ՔԱՐԱՂՈՒԽ ՏԵՂԱՆՔԸ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՎՈՐ Է ՆԱԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԱՅ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննիսյանը անդրադարձ է կատարել Փառուխ-Քարաղուխ տեղանքի պատմամշակութային ժառանգությանը...



րոնշյալ տեղանքն առանձնանում է Արցախի դարավոր պատմությունն ու մեր ինքնությունը վավերացնող հարուստ պատմամշակութային արժեքներով...

ունի չբացահայտված հուշարձաններ: Մեր մշակութային ինքնությանն ու պատմամշակութային ժառանգությանը հասցվում է հերթական ցավալի հարվածը...

Փառուխ-Քարաղուխ տեղանքը, սակայն, անչափ կարևոր է նաև Արցախի պատմամշակութային ժառանգության տեսանկյունից: Քարաղուխը գտնվում է Ասկերան քաղաքից 10 կմ հյուսիսարևմուտք՝ Շիկաքար կոչվող ժայռի շրջակայքում...

գիտական արժեք ունեցող մշակույթի հուշարձաններ, գերեզմանոցներ, մոնումենտալ արվեստի կոթողներ, մասնավորապես՝ խաչքարեր, տապանաքարեր: Այստեղ է գտնվում նաև Շիկաքարի քարանձավը, որտեղ 2011թ. հետազոտություն է կատարել Ազոխի միջազգային հնագիտական արշավախումբը:



ջազգային կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում այս խնդիրն: Աղբյուրներից տարվող էթնոցիֆիկ քաղաքականությունը չի փոխվել: Աղբյուրների անպատեհությունը ծնունդ է տալիս նոր հանցանքներ, ինչն էլ տեղի է ունենում մեր աչքի առաջ ամեն օր միջազգային հանրության լուրջ ուշադրությամբ: Արցախի պատմամշակութային հարուստ ժառանգությունը պաշտպանության կարիք ունի»:

ԱՅ ԿԳՄՍ

«ԱՂԵՂՆԱԿՈՐ ՀԱՅԿԸ»՝ ՏԱՐԿԱ ԼԱԿԱԳՈՒՅՆ ԱՃԻՆԱՏԱՆՔ

1 Նշանակում է, ՄՊՍԿ սաները, օրեր շարունակ աշխատելով այդ գործ վրա՝ ընդօրինակել են մեր աշխատանքների համար: «Տարվա լավագույն աշխատանք»-ի համար պարգևատրվեցին Մար-

ամ Անահիտի, որը Մարիամաձորից է, և ներկայումս պարունակ է երևանում, փայտի վրա ազգային տարազի կոմպոզիցիաները, նկարչական աշխատանքները ցուցադրվել են Բելգիայում, Իսրայելում:



ների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-մրցույթի անցկացմանն աջակցելու համար: Միջոցառման անմիջական կազմակերպիչ՝ ԱՅ ԿԳՄՍՆ նախագորակոչային պատրաստության և արտադրողական ծրագրերի վարչության արտադրողական ծրագրերի բաժնի վարիչ Արմեն Պետրոսյանն ասաց, որ ցուցահանդեսը, որը նպատակ ունի նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը և ստեղծա-



սան Անահիտի, որը Մարիամաձորից է, և ներկայումս պարունակ է երևանում, փայտի վրա ազգային տարազի կոմպոզիցիաները, նկարչական աշխատանքները ցուցադրվել են Բելգիայում, Իսրայելում:

ԱՅ ԿԳՄՍՆ շնորհակալագրով պարգևատրվեց Ստեփանակերտի «Պոլ Էլյուարի տուն-Ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ը՝ ՄՊՍԿ-

առասպելական դյուցազնի կամքն ու վճռակալությունը: Եվ Մարտակերտի ՄՊՍԿ-ն արժանացավ: «Տարվա լավագույն աշխատանք» մրցանակին:

տակերտի ՄՊՍԿ սան Էլինա Գրիգորյանը՝ «Առյուծաձև Միեր» գործելնի համար, Ստեփանակերտի ՄՊՍԿ-ից՝ Վերոնիկա Վերդյանը, Հաղորդից՝ Անահիտ Այվազյանը: Ի դեպ, ինչպես ասաց Ի. Թամրազյանը, իրենց



գործական ունակությունների, հմտությունների զարգացմանը, ամրապնդել Ստեփանակերտի և շրջանների ՄՊՍԿ-ների միջև կապը, ի հայտ բերել տաղանդավոր երեխաներին՝ հետագայում ՀՀ-ում կամ միջազգային մրցույթներում նրանց մասնակցությունն ապահովելու համար, նախարարությունը կդարձնի ավանդական:

Ս. ԽԱԶՍՏՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

2022 թվականի ապրիլի 1-ի

N109-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 90-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

Չիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 4-ի N 74-Ն հրամանում ուժը կորցրած ճանաչելու մասին» N 90-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Հրամանի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱԳՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՋՈՐԴ ՂԱՄԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ» բառերը փոխարինել «ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱԳՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ» բառերով,
  - 2) Հրամանի նախաբանում «օրենքի» բառից առաջ համել «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության» բառերը,
  - 3) Հրամանի 1-ին կետում «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության կարգը» բառերով,
  - 4) Հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանում ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ՀԱՎՈՐՅԱՆ

«Հավելված

Հավելված  
Արցախի Հանրապետության  
կրթության, գիտության, մշակույթի  
և սպորտի նախարարի  
2022 թվականի ապրիլի 1-ի  
N 109 -Ն հրամանի

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱԳՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների (այսուհետ՝ սովորող) կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության, ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդների ներկայացման, մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպման և պարգևատրման հետ կապված հարաբերությունները:

2. ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՂԱՄԱՐԱՆԻ ԴԱՄԱՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄ

2. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ քննադրման միջոցով: Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի, դասվարի հիմնավորված առաջարկության և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ:

2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Ինտելեկտուալ (մտավոր) հետամնացությամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա:

3. Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ Հաստատության հայեցողությամբ և սահմանած ժամանակացույցի համաձայն: Քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից: Փոխադրական քննությունները գնահատվում են՝

- 1) գրավորը՝ 20 միավորային համակարգում.
- 2) բանավորը՝ 10 միավորային համակարգում:

4. Փոխադրական քննությունները գրավոր 8-20 (բանավորի դեպքում՝ 4-10) միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Գրավոր 1-7 (բանավորի դեպքում՝ 1-3) միավոր գնահատված սովորողը վերաքննություններ է հանձնում օգոստոսի

20-30-ն ընկած ժամանակահատվածում:

5. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

6. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի երկրորդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական բոլոր քննություններից 4-10 և 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

7. 12-րդ դասարանում (հանրակրթական հիմնական ծրագրերի երրորդ աստիճանի ավարտական դասարան) հունվար կամ հունիս ամիսներին ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

8. Ինտելեկտուալ (մտավոր) հետամնացությամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝

առանց քննական գնահատականների:

9. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում: Տարեկան գնահատականները որոշվում են կիսամյակային գնահատականների համագումարների միջինացման արդյունքում:

10. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունում ավարտելու վրա:

11. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9-10 կամ 18-20, 4-րդ դասարանում տարեկան և գիտելիքների ստուգումից 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-10 կամ 18-20 միավոր գնահատված սովորողները պարգևատրվում են Նախարարության գովասանագրով:

12. 8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկա-

ԿԱՐԳ

ներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի:

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը,

2) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ և մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Արցախի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

3) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

**3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

14. 4-րդ դասարանում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ «Մայրենի» (գրավոր) և «Մաթեմատիկա» (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաև «Ռուսաց լեզու» (բանավոր): Առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից, Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից հաստատված ուղեցույցների համաձայն:

15. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:

16. 4-րդ դասարանի՝ տարեկան 1-3 կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքերում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, սովորողը հանձնում է վերաքննություն՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կազմած առաջադրանքների հիման վրա:

17. Գիտելիքների ստուգման ենթակա առարկայից տարեկան 1-3 գնահատված լինելու դեպքում սովորողը չի մասնակցում տվյալ առարկայից գիտելիքների ստուգմանը:

18. 4-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

1) սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը գերազանցում է երեքը,

2) չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-3 միավոր:

19. 9-րդ դասարանում անցկացվում են ավարտական քննություններ հետևյալ առարկաներից՝

1) Հայոց լեզու (կենտրոնացված՝ ԳԹԿ կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր): Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների ընտրության՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

2) Մաթեմատիկա (հանրահաշիվ, երկրաչափություն) (կենտրոնացված՝ ԳԹԿ կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր): Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների ընտրության՝ իրենց

կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

3) Գրականություն (բանավոր),

4) Օտար լեզու (Ռուսերեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր),

5) Բնագիտություն (Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Աշխարհագրություն առարկաներ՝ սովորողի ընտրությամբ, գրավոր): 2022-2023 ուսումնական տարվանից՝ լաբորատոր փորձերի հիման վրա՝ բանավոր:

6) Հայոց պատմություն (բանավոր),

7) Ֆիզկուլտուրա (նորմատիվների հանձնում),

8) Ռուս գրականություն (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:

20. Բանավոր քննությունները կարող են կազմակերպվել 2 և ավելի օրերի ընթացքում՝ կախված Հաստատության սովորողների թվից:

21. Սույն կարգի 19-րդ կետի 3-8-րդ կետերով սահմանված առարկաների քննությունները սովորողները հանձնում են իրենց Հաստատությունում:

22. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ դասարանների սովորողների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից:

23. «Ֆիզկուլտուրա» 9-րդ դասարանների առարկայի ավարտական քննությունն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ 10 միավորային համակարգում:

24. 9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 կամ 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում չորսը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում (բացառությամբ սույն կարգի 19-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: 9-րդ դասարանի սովորողի հետագա ուսուցման առանձնահատուկ դեպքերում հնարավոր է կրցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) որոշմամբ վերաքննության ժամանակահատվածի փոփոխություն:

25. 9-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե սույն կարգի 24-րդ կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը գերազանցում է չորսը կամ չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

26. 12-րդ դասարանում հունվար կամ հունիս ամիսներին անցկացվում են պետական ավարտական քննություններ հետևյալ առարկաներից՝

1) Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր),

2) Մաթեմատիկա (գրավոր),

3) Հայոց պատմություն (գրավոր),

4) Ռուս գրականություն (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:

27. Եթե 12-րդ դասարանի սովորողը առողջական խնդրի պատճառով հունվար ամսին չի մասնակցել պետական ավարտական որևէ քննության, ապա տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

28. Հունվար ամսին պետական ավարտական որևէ քննությունից 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում 12-րդ դասարանի սովորողը տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

29. Պետական ավարտական որևէ քննական առարկայից անբավարար գնահատված լինելու դեպքում 2-րդ կիսամյակում տվյալ առարկան տվյալ սովորողի համար դառնում է պարտադիր ուսումնասիրության առարկա:

30. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկաների թեստերը կազմվում են ռուսերենով:

31. Ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

32. Ռուսերենով ուսուցմամբ 12-րդ դասարանների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից:

33. «Ֆիզկուլտուրա» 12-րդ դասարանների առարկայի ստուգաբան անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ որևէ քննաշրջանի ընթացքում:

34. 12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ հունիս ամսին նախատեսված քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են սույն կարգի 30-33-րդ կետերի պահանջներին համապատասխան:

35. 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

36. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ» կամ «Երկրաչափություն» կամ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկա» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում, իսկ 9-րդ դասարանների սովորողները՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

37. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան և «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

38. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 9-րդ դասարանի սովորողները՝ օգոստոսի 20-30-ը, 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

39. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատա-

կաններ նշանակելու համար:

40. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու», «Հայ գրականություն» կամ «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներն ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում, սովորողի ցանկությամբ, կարող են գրվել՝ «չի ուսումնասիրել» բառերը: Տվյալ դեպքում սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների և 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների ավարտական, պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

41. 19 տարին լրացած՝ առնվազն 1 ուսումնական առարկայից տարեկան 1-3 կամ քննական 1-7 միավոր գնահատված (այդ թվում՝ վերաքննության արդյունքներով), ավարտական, պետական ավարտական քննություններին չմասնակցած 9-րդ կամ 12-րդ դասարանների սովորողները դուրս են մնում Հաստատությունից:

42. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի արական սեռի սովորողները Հաստատությունից դուրս մնալու դեպքում իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

1) ընթացիկ տարվա ամառային գորակոչին զինվորական ծառայության մեկնածները՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում՝ գորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում,

2) ծառայության ընթացքում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում, ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում,

3) զորացրվելուց անմիջապես հետո իրենց ուսումնառած Հաստատությունում՝ ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում:

43. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված քաղաքացիներին իրավունք է վերապահվում հաջորդ տարի նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

44. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողն իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

45. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններում (այդ թվում՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանում) հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից) մինչև 3 առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, վերաքննությունների հանձնումից հետո:

ԿԱՐԳ

5. Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են Հաստատության համապատասխան առարկայական մեթոդական միավորման կողմից:

46. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ,

2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է համձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

47. Վերաքննությունները չհամձնելու դեպքում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է 46-րդ կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

48. Սույն կարգի 46-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմաններով փոխադրվող կամ սույն կարգով սահմանված վերաքննություններ համձնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

49. Հիմք ընդունելով առարկայական մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

50. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի համձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասընթացը՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

51. 2-12-րդ դասարանների երեքից ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները (մինչև 19 տարին լրանալը) չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

52. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և Նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատած սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամկետների և անցկացման կարգի համաձայն:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՍՈՒԼՔՆԵՐԻՑ ԲԱՏԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

53. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

54. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատման է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ

դասարանների սովորողների բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

55. 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը, մանկավարժական նիստում քննարկելուց հետո, Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն և ԳԹԿ:

56. Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողների՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում՝ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը:

57. Որևէ կիսամյակում 2-11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի) կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Տվյալ կիսամյակի կիսամյակային գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

58. Ուսումնական տարվա ընթացքում 2-11-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայած սովորողի, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի) բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն: Տարեկան գնահատականները որոշվում են երկու կիսամյակների գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում:

59. 2-11-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայած սովորողները տվյալ ուսումնական տարվա բացակայությունների ամփոփումից մինչև ուսումնական պարապմունքների ավարտն ընկած ժամանակահատվածում լրացուցիչ քննություններ են համձնում, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների), «Մայրենի», «Հայոց լեզու և հայ գրականություն», և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզիկոլոգիա» առարկայից անցկացվում է ստուգարք:

60. 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 120-240 ժամ բացակայություն ունենալու դեպքում սովորողը լրացուցիչ քննություն է համձնում այն առարկաներից, որոնք ընտրել է:

61. 2-8-րդ, 10-11-րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ դասարանների սովորողները 240 ժամից ավելի բացակայելու դեպքում չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը, 9-րդ և 12-րդ դասարանների 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում Հաստատությունից:

62. Բոլոր դասարանների քննական և ստուգողական առաջադրանքները մշակվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով: Դրանք հաստատվում են Հաստատության տնօրենի կողմից:

63. Հաստատության տնօրենը կազմում է սույն կարգի 59-րդ կետում նշված քննությունների ժամանակացույցը և տեղեկացնում Նախարարությանն ու շրջանի վարչակազմին (այսուհետ՝ լիազոր մարմին): Քննություններին կարող են մասնակցել Նախարարության

և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ներքև):

64. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:

5. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

65. Մեղալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան, իսկ միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9 կամ 10 միավոր և (կամ) 18-20 միավոր գնահատված սովորողը:

66. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չգնահատված սովորողը, որպես Մեղալի հավակնորդ, չի ներկայացվում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզիկոլոգիա», «Նախնական գիմնոպիական պատրաստությունն առարկաներից ազատված լինելը,

2) միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլաններով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և կրցալիս Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

67. Մեղալի հավակնորդ սովորողների նախնական անվանացանկերը առաջին կիսամյակն ամփոփելուց անմիջապես հետո Հաստատությունները ներկայացնում են շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնին, իսկ Նախարարության ենթակայության և ոչ պետական հանրակրթական Հաստատությունների սովորողների անվանացանկերը՝ Նախարարություն:

68. Մինչև ապրիլի 20-ը շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

69. Մինչև մայիսի 10-ը շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը ստուգված ցուցակները ներկայացնում են Նախարարություն՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը (հիմնական կրթության վկայականի պատճենը, քաղվածք մանկավարժական խորհրդի որոշումից, տեղեկանք սովորողի առաջադիմության մասին, տեղեկատվություն սովորողի՝ պետական ավարտական և միասնական քննությունների վերաբերյալ): Մեղալի հավակնորդների ներկա-

յացված փաստաթղթերը Նախարարությունում կարող են կրկնակի ուսումնասիրվել:

6. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

70. Մեղալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ Հաստատության ենթակայությունից և Հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 66-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից որևէ մեկից (ընտրությամբ) պետական ավարտական քննությունները համձնում են կենտրոնացված կարգով՝ Նախարարության կողմից նախապես որոշված՝ շրջանի (Ստեփանակերտ քաղաքի) որևէ Հաստատությունում՝ տվյալ քննության համար սահմանված օրերին:

71. Քննությունների նախապատրաստման համար պատասխանատու է քննական կենտրոնի ղեկավարը, որը ԳԹԿ-ի կողմից հաստատված քննական կենտրոնի ի պաշտոնե ղեկավարն է: Քննությունների ընթացքը և աշխատանքների ստուգումը վերահսկում են Նախարարության ներկայացուցիչները:

72. Առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեղալի հավակնորդի համար հիմք է կենտրոնացված համակարգով համձնված պետական քննական առարկայի գնահատականը:

73. Քննական աշխատանքները ստուգվում են Նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ԳԹԿ-ի կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

74. Մեղալի հավակնորդ այն շրջանավարտները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են համձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

75. «Ֆիզիկոլոգիա» առարկայից ստուգաբաժնի Մեղալի հավակնորդը համձնում է իր Հաստատությունում:

76. Մեղալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

77. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում «Ֆիզիկոլոգիա» առարկայից ստուգաբաժնի արդյունքների մասին: Ստացված արդյունքները ընդհանրացվում են շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիներում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում Նախարարության: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

78. Պետական ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային համակարգում՝ 9, 10 միավոր ստացած և «Ֆիզիկոլոգիա» առարկայից ստուգաբաժնի հանձնած Մեղալի հավակնորդները ստանում են «Գերազանցության» նշանով միջնակարգ կրթության ատեստատ և պարգևատրվում են Մեղալով:



ԴԻՍՈՐԴ-2022

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մարտի 21-ի

N287-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 409-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 14-ի N 301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 409-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում են»  
ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՅ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության  
կառավարության 2022 թվականի  
մարտի 21-ի N287-Ն որոշման

«Հավելված»  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի մայիսի 4-ի N 409-Ն որոշման»

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՅԵՐՈՒԿ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՍ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՅՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ)

1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում (այսուհետ՝ բուհեր) Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի առկա ուսուցման ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և ընդունելության քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Սույն կարգի պահանջները չեն տարածվում բարձրագույն ռազմական, ոստիկանական և արտակարգ իրավիճակների պետական ուսումնական հաստատությունների վրա:

3. Բուհերի առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է տվյալ ուսումնական տարվա համար Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի (այսուհետ՝ ցանկ) համաձայն:

4. Սույն կարգի համաձայն բուհերի ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար)՝ ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի)՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակների:

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի) Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ ըստ բուհերի ու մասնագիտությունների (կրթական ծրագրերի) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հաստատված տեղերի:

5. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ կամ մասնագիտական (նախնական, միջին, բարձրագույն) կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

6. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Արցախի Հանրապետության բուհեր կարող են ընդունվել հա-

մաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ օտարերկրացիների ընդունելության կարգի:

7. Բուհեր ընդունվելու համար տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները (այսուհետ՝ դիմորդ) հանձնում են ընդունելության քննություններ: Ընդունելության քննությունները անց են կացվում քննական կենտրոններում: Քննական կենտրոնում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը և բժշկի ներկայությունը պարտադիր են:

8. Ընդունելության քննությունները միասնական, ներբուհական և Արարատյան բակալավրիատի քննություններն են: Միասնական քննությունները կազմակերպում և անցկացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ԳԹԿ), ներբուհական քննությունները կազմակերպում և անցկացնում է համապատասխան բուհերում, իսկ Արարատյան բակալավրիատի քննությունները կազմակերպում և անցկացնում է «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ներդրման և իրականացման համար պատասխանատու կազմակերպությունը՝ «Այբ» կրթական հիմնադրամը՝ ԳԹԿ-ի հետ համատեղ: Տվյալ ուսումնական տարում դիմորդները ընդունելության քննությունները կարող են հանձնել միայն մեկ անգամ:

9. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննություն հանձնում են ըստ ԳԹԿ-ի տնօրենի կողմից սահմանված օրերի: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից:

10. Ընդունելության քննությունների հայտագրումը անցկացվում է 2 փուլով, մասնագիտությունների (կրթական ծրագրի) հայտագրումը՝ 3 փուլով:

1) առաջին փուլի ընդունելության քննությունների և մասնագիտության (կրթական ծրագրի) հայտագրումը կատարվում է տվյալ տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 8-ը՝ ժամը 18:00 ընկած ժամանակահատվածում:

Առաջին փուլի միասնական քննությունները անց են կացվում տվյալ տարվա հունիս ամսում:

2) միասնական քննությունների և մասնագիտության հայտագրման երկրորդ փուլը ընդգրկում է՝

ա. տվյալ տարվա հունիսի 26-ից մինչև հունիսի 30-ը՝ ժամը 17:00 ընկած ժամանակահատվածում օտարերկրացիների, տվյալ տարվա ամառային զորակոչից զորացրված կամ տվյալ տարվա մինչև հունիսի 31-ը գորացրվող դիմորդների կողմից մասնագիտության և տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) սահմանված (հանձնած կամ հանձնվող) քննական առարկաների առցանց հայտագրումը: Երկրորդ փուլի միասնական քննությունները անց են կացվում տվյալ տարվա հունիս ամսում,

բ. առաջին փուլի միասնական քննությանը հարգելի պատճառով չմասնակցած կամ հիվանդության պատճառով ընդհատած, ինչպես նաև ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ երկրորդ փուլի միասնական քննությունները անց են կացվում տվյալ տարվա հունիս ամսում:

3) մասնագիտության (կրթական ծրագրի) հայտագրման երրորդ (լրացուցիչ) փուլը ընդգրկում է՝ տվյալ տարվա հունիսի 19-ից մինչև հունիսի 26-ը ընկած ժամանակահատվածում հիմնական փուլի մրցույթի արդյունքներով բուհ չընդունված դիմորդների կողմից մեկ կամ ավելի բուհի մինչև վեց մասնագիտության (կրթական ծրագրի) առցանց հայտագրումը, եթե այդ մասնագիտությունների (կրթական ծրագրի) գծով առկա են թափուր տեղեր, և դիմորդը այդ մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված միասնական քննություններից ունի դրական գնահատականներ:

11. Այն դիմորդները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, և միասնական քննությունները ցանկանում են հանձնել ռուսերեն թարգմանությամբ թեստերով (բացառությամբ «Հայոց պատմություն» և օտար լեզուների) միասնական քննությունները կարող են հանձնել տվյալ տարվա հունիսին:

12. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխար-

հագրություն» առարկաների համար՝ 180 րոպե:

2) «Օտար լեզու առարկայի համար՝ 150 րոպե:

13. Բուհերի ընդունելության միասնական քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով, շտեմարաններով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է ԳԹԿ-ն:

14. Ներբուհական են՝

1) Արցախի պետական համալսարանի «011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն» («011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «011401.11.6 Կերպարվեստ», «011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն» կրթական ծրագրեր) մասնագիտությունների մասնագիտական առարկաների քննությունները:

2) Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «021201.00.6 Դիզայն» («021201.01.6 Դիզայն», «021201.03.6 Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրեր), «073101.00.6 Ճարտարապետություն» («073101.01.6 Ճարտարապետություն կրթական ծրագիր) մասնագիտությունների մասնագիտական առարկաների քննությունները:

3) «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն» («011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն» կրթական ծրագրեր) մասնագիտությունների մասնագիտական առարկաների քննությունները:

15. Ներբուհական քննություններն անցկացվում են համապատասխան բուհերի կողմից մշակված և Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է ԳԹԿ-ն: Ներբուհական քննությունները անցկացվում են մեկ փուլով՝ տվյալ տարվա հունիսի 26-ից մինչև հունիսի 8-ը ընկած ժամանակահատվածում՝ ըստ ԳԹԿ-ի տնօրենի կողմից սահմանված օրերի:

ԳԻՍՈՐԴ-2022

16. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմանը մրցույթի արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

2. ՄԻԱՍՆԱԿԱՆ, ՆԵՐՔՈՒԿԱԿԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

17. Միասնական, ներքուհական քննությունների և մասնագիտության դիմում-հայտերը (այսուհետ՝ ընդունելության դիմում-հայտ) լրացնելը և մուտքագրելը.

1) դիմորդը ներքուհական և առաջին փուլի միասնական քննություններին մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտը ԳԹԿ է ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով տվյալ տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 8-ը՝ ժամը 18:00: Ընդունելության դիմում-հայտի ձևը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը.

2) ԳԹԿ-ն տվյալ տարվա ապրիլի 1-ից առավելագույնը հինգ անգամ զանգվածային լրատվամիջոցներով հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են ընդունելության դիմում-հայտերի ընդունումը, սկսելու և ավարտելու ժամկետները.

3) դիմորդը ընդունելության դիմում-հայտում լրացնում է բուհերի բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով առկա ուսուցման մասնագիտությունների և ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) անվանումը, տվյալ մասնագիտությամբ (կրթական ծրագրով) սովորելու համար սահմանված ընդունելության մրցութային քննությունները՝

ա. միասնական քննություններ հանձնող դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մինչև երեք բուհերի՝ մինչև երկու անվճար և մինչև երեք վճարովի ուսուցման համակարգերի նույն մասնագիտության (կրթական ծրագրի) մրցույթին.

բ. ներքուհական քննություններ հանձնող դիմորդը կարող է մասնակցել մեկ բուհի նշված մասնագիտության (կրթական ծրագրի) ըստ ուսուցման անվճար և վճարովի ուսուցման համակարգերի մրցույթին.

4) ցանկի «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդին թույլատրվում է ընտրել նշված ընդունելության քննություններից մեկը.

5) դիմորդը յուրաքանչյուր ընդունելության քննության համար փոխանցում է 1500 ՀՀ դրամ՝

ա. միասնական քննությունների համար՝ Արցախի Հանրապետության ԳԹԿ հաշվեհամարին.

բ. ներքուհական քննությունների համար՝ համապատասխան բուհի հաշվեհամարին.

6) սույն կարգի 63-րդ և 64-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են ընդունելության քննությունների վճարից: Համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը ուղարկվում է ընդունելության դիմում-հայտի հետ.

7) ընդունելության դիմում-հայտ լրացնելու ընթացքում դիմորդն անհրաժեշտության դեպքում կարող է օգտվել դպրոցի օժանդակությունից.

8) Հայաստանի Հանրապետության բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի համար դիմորդների մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունների հայտագրումը.

ա. եթե նշվող մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները միասնական են, ապա դիմորդը ընդունելության դիմում-հայտը առցանց ուղարկում է Արցախի Հանրապետության ԳԹԿ, ստանում է

ԳԹԿ-ի անձնակազմի համար և Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ի համապատասխան կայքում գրանցում է ընդունելության քննությունները.

բ. եթե նշվող մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները ներքուհական են, ապա դիմորդը դիմում է Արցախի Հանրապետության ԳԹԿ: Գնահատման և թեստավորման կենտրոնում հայտագրվում են ընտրած մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները, և դիմորդին տրամադրվում է ԳԹԿ-ի անձնակազմի համար: Այնուհետև դիմորդը ընդունելության դիմում-հայտը մուտքագրում է Հայաստանի Հանրապետության ԳԹԿ համապատասխան կայքում, նաև ուղարկում է պետական մարմնի կողմից համապատասխան մասնագետ ունենալու պահանջի վերաբերյալ տրված տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը.

9) եթե դիմորդը հայտագրվում է ՀՀ բուհերի ոչ նպատակային տեղերում, ապա դիմում է Արցախի Հանրապետության ԳԹԿ: Գնահատման և թեստավորման կենտրոնում հայտագրվում են ընտրած մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները, և դիմորդին տրամադրվում է ԳԹԿ-ի անձնակազմի համար: Այնուհետև դիմորդը ընդունելության դիմում-հայտը մուտքագրում է Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ի համապատասխան կայքում.

10) դիմորդները 2-րդ փուլի դիմում-հայտ լրացնելու համար դիմում են ԳԹԿ:

18. Տվյալ տարվա մինչև հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողները կարող են դիմել՝

1) տվյալ տարվա ընդունելության մրցույթին մասնակցելու՝ մինչև զորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագրով.

2) տվյալ տարվա ընդունելության քննություններին մասնակցելու համար:

19. Տվյալ տարվա մինչև հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողները գործառնալի հրամանատարի կողմից տրված տեղեկանք են ներկայացնում այն մասին, որ նրանց զորացումը տեղի է ունենալու մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը: Մինչև հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողի կողմից տրված տեղեկանքը գործարկվող զինծառայողի կողմից տրված լիազորագրում նշված անձը առցանց եղանակով ուղարկում է ԳԹԿ: Մինչև հուլիսի 31-ը գործարկվող և քննություններ հանձնող զինծառայողը լիազորագրում նշում է բուհերի ընդունելության քննությունները և ընտրած մասնագիտությունը, որոնք լիազորագրում նշված անձը առցանց եղանակով ընդունելության դիմում-հայտում հայտագրում է լիազորագրում նշված հերթականությամբ: Մինչև հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողներն օգտվում են սույն կարգի 65-րդ կետով սահմանված արտոնությունից:

20. Դիմորդը դիմում-հայտի հետ ներկայացնում է սույն կարգի 63-66-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը.

1) միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմների էլեկտրոնային տարբերակը.

2) ընդունելության յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցած 1500-ական ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագրի էլեկտրոնային տարբերակը, եթե ազատված չէ քննությունների վճարից:

21. Ընդունելության փաստաթղթերի ժամկետի ավարտից հետո ընդունելության դիմում-հայտի փոփոխման ենթակա չէ, և լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում:

22. Դիմորդին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը գրվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

23. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+ տարբերակները

չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինած «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկայի հետ: Ընդ որում՝

- 1) «031801.00.6 Միջազգային հարաբերություններ», «032101.00.6 Լրագրություն», «023101.00.6 Հայոց լեզու և գրականություն», «031301.00.6 Հոգեբանություն», «011201.00.6 Նախադպրոցական մանկավարժություն», «011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն», «011302.00.6 Հատուկ մանկավարժություն», «023201.00.6 Լեզվաբանություն (023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)) մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությունը պարտադիր է:

24. Դիմորդի կողմից դիմում-հայտում լրացված տվյալների, փաստաթղթերի հավաստիությունը և գնահատականների համապատասխանությունը հաստատելու նպատակով ԳԹԿ կարող է դիմել հայտատուի ուսումնական հաստատությունը:

25. Հայտագրման ավարտից հետո միասնական և ներքուհական քննություններ հանձնող դիմորդներին տրվում են անցաթղթեր: Անցաթղթերը միասնական քննությունների մեկնարկից առավելագույնը 5 օր առաջ ուղարկվում են դպրոցներ կամ դիմորդներին: Միասնական քննություններ հանձնող դիմորդներին անցաթղթերն ուղարկում է ԳԹԿ-ն, իսկ ներքուհական քննություններ հանձնողներին՝ համապատասխան բուհը: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

26. Անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան, համարը) անձնական համարը), ուսումնական հաստատության անվանումը, լուսանկար, քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը:

27. Դիմորդը միասնական քննության անցաթուղթը կորցնելու մասին առցանց եղանակով տեղեկացնում է ԳԹԿ, ներքուհական քննության անցաթղթի դեպքում՝ համապատասխան բուհին: ԳԹԿ-ն և բուհը համապատասխանաբար 24 ժամվա ընթացքում դիմորդին են տալիս նոր անցաթուղթ: Եթե անցաթուղթը կորել է տվյալ օրը կամ տվյալ առարկայի քննության նախորդ օրը, ապա անցաթուղթը կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու ԳԹԿ-ի տվյալների բազայի հիման վրա:

28. Բուհի ընդունելության քննությունների և մասնագիտության հայտագրման գործընթացին օժանդակում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

29. Բուհի ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է ղեկավարը: Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ղեկավարը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովը իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿՎՅՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

30. Միասնական քննությունների կազմակերպումը՝

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական

քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 15-ը հաստատում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝ (այսուհետ՝ նախարար) ԳԹԿ-ի տնօրենի ներկայացմամբ.

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը հաստատում է նախարարը՝ ԳԹԿ-ի տնօրենի ներկայացմամբ.

3) քննական կենտրոնի ղեկավարը քննական գործընթացը կազմակերպում է տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան.

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում.

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 40 դիմորդի համար ԳԹԿ-ի առավելագույն մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր), միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), ովքեր իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն.

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են ԳԹԿ-ի ներկայացուցիչները և կազմակերպիչները, որոնց կազմը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ:

7) համակարգչային աշխատանքներն իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնց կազմը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը.

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննական նախորդ օրը՝ ԳԹԿ-ի ներկայացուցիչ կազմակերպած վիճակահանության միջոցով: Նույն օրը ԳԹԿ-ի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը.

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով: Քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի: Խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը, իսկ յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում է մեկական կազմակերպիչ:

10) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն.

11) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները.

12) քննությունն սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին.



ԿԱՐԳ

13) քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցչի ներկայությամբ, այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները, յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ:

14) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝  
ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին:

բ. պատասխանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ և օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խտանման դեպքում:

15) քննության օրը դիմորդը քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմում-հայտում:

16) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

17) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին: Օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը: Հերթապահներն ու պատերին փակցված լրացուցիչ ուղեպայքերը դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը:

18) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է առնվազն երկու կազմակերպչի կողմից: Դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի:

19) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում է իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին:

20) քննասենյակում դիմորդներին տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը, քննական կենտրոնի ղեկավարից ԳԹԿ-ի ներկայացուցչի ներկայությամբ ստանալով խմբերի թվին համապատասխան թեստերի փաթեթները, դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա:

21) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ ԳԹԿ-ի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդներին համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բոլոր քարկան տեսակների և կարգի մասին: Դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները, այնուհետև կազմակերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:

22) քննասենյակի պատասխանատու

կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն 2 կազմակերպչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը:

31. Միասնական քննության անցկացումը՝

1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարաններին նստած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին): Փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը:

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը: Դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և նստարանի համարները: Պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակի վրա կատարում նշում քննության սկզբի և ավարտի վերաբերյալ: Քննության սկիզբը հայտարարվելուց հետո արգելվում է ուշացած դիմորդի մուտքը քննասենյակ:

3) միասնական քննությունը Արցախի Հանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին:

4) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչն ավելորդ (չօգտագործված, խտանված) քննական թեստերի առկայությունը արձանագրում է, հաշվարկում և պահում իր մոտ:

5) միասնական քննության ընթացքում արգելվում են այլ դիմորդների հետ խոսելը, առանց կենտրոնի ղեկավարի թույլտվության տեղը փոխելը, դիմորդների կողմից թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ քննասենյակ բերելը:

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ զուգարանից օգտվելու կամ վատառողջության ստորագրելով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպչի կամ ԳԹԿ-ի ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ:

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում:

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորերով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, ԳԹԿ-ի ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը: Թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում է՝ «խտանված է»:

9) դիմորդների կողմից քննական առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպիչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել միայն քննական կենտրոնի ղեկավարն ու ԳԹԿ-ի ներկայացուցիչը:

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդներին ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

11) կազմակերպիչները քննության ամ-

բողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված սեղանների մոտ: Նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից: ԳԹԿ-ի ներկայացուցիչը սույն պահանջների խախտման մասին տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է կազմակերպչին հեռացնել քննասենյակից: Կազմակերպչին քննասենյակից հեռացնելն արձանագրվում է ստորագրվում է ԳԹԿ-ի ներկայացուցչի ու կենտրոնի ղեկավարի կողմից:

12) ԳԹԿ-ի ներկայացուցիչն իրավունք ունի քննության ընթացքում մեկ անգամ նախազգուշացնել դիմորդին՝ արձանագրելով նախազգուշացումը, կրկնվելու դեպքում՝ հեռացնել քննությունից, եթե նա առանց թույլտվության քննության ընթացքում դուրս է եկել քննասենյակից, խոսել դիմորդների հետ, փոխել տեղը, եթե քննության ընթացքում դիմորդն արտագրել է, կամ նրա մոտ հայտնաբերվել է բջջային հեռախոս կամ կապի այլ միջոց, ապա դիմորդը հեռացվում է քննությունից:

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը:

14) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի և կենտրոնի ղեկավարի կազմած արձանագրության հիման վրա) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է՝ «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը:

32. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը ԳԹԿ-ի ներկայացուցչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթուղթը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպչին: Դիմորդը թեստը և պատասխանների ձևաթուղթը կազմակերպչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները: Դիմորդը պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը պահում է իր մոտ:

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթուղթը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպչին, վերցնում իր պատասխանների ձևաթուղթը, պատճենահանում, պատասխանների ձևաթուղթը հանձնում իր խմբի կազմակերպչին, դիմորդների ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և դուրս գալիս քննասենյակից: Այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը:

3) քննության ավարտից հետո խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպչին:

4) քննության ժամանակի ավարտից հետո, ոչ ուշ քան 30 րոպեի ընթացքում, պա-

տասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը:

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին:

6) կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

33. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ ԳԹԿ տեղափոխելու համար:

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը ԳԹԿ է տեղափոխում քննության ավարտից հետո: Նույն օրվա ընթացքում ԳԹԿ-ի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության ԳԹԿ:

3) Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ում Արցախի Հանրապետության ԳԹԿ-ի ներկայացուցչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը: պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրությունը:

34. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերն ստուգվում են Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով:

2) թեստերը չեն ստուգվում: Սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը:

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես դիմորդի քննական արդյունք:

35. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) միասնական քննությունների առաջին փուլի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո հինգերորդ օրը՝ բացառությամբ վերջին քննության, որի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո երրորդ օրը: Երկրորդ փուլի քննությունների արդյունքները հրապարակվում են քննության հաջորդ օրը:

2) ԳԹԿ-ում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննություններին մասնակցած դպրոցների:

3) քննական արդյունքների ցուցակները վավերացվում են ԳԹԿ-ի տնօրենի կողմից:

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո ԳԹԿ-ից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը:

ԴԻՍՈՐԴ-2022

9 5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ: ԳԹԿ-ը միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը ուղարկում է դպրոցներ:

6) դպրոցը միասնական քննության ավարտական մասի արդյունքը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ կրթության ատեստատում:

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ քննական կենտրոնից:

36. Միասնական քննություն հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում է միասնական քննություններից դիմորդի ստացած միավորները: Վկայագրի ձևը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

37. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ-դիմորդները մինչև հուլիսի 10-ը վկայագրերն ստանում են իրենց դպրոցներից, իսկ մյուսները՝ գնահատման և թեստավորման կենտրոնից՝ ներկայացնելով ընդունելության դիմում-հայտերի լրացման համար հիմք ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

38. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Դիմորդը, պահպանելով գնահատականը, կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով:

39. Զորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպվող ընդունելության քննությունների առաջին և երկրորդ (լրացուցիչ) մրցույթների համար:

40. Ընդունելության քննության արդյունքների բողոքարկումը քննելու նպատակով ԳԹԿ-ում ստեղծվում է ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ բողոքարկման հանձնաժողով):

41. Միասնական քննության բողոքարկումը կարող է լինել՝

1) քննության անցկացման կարգի խախտման մասին:

2) քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին:

42. Միասնական քննության անցկացման կարգի խախտման մասին բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.

1) դիմորդը միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպչին կամ ԳԹԿ-ի ներկայացուցչին:

2) դիմորդը բողոք-դիմումը շարադրում է ձևաթղթի վրա, պատասխանատու կազմակերպիչը բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին:

3) պատասխանատու կազմակերպիչը

գրում է բացատրություն՝ այն կցելով բողոք-դիմումին, և հանձնում կենտրոնի ղեկավարին:

4) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է ԳԹԿ:

5) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմումը՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ:

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ:

6) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումը շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել:

7) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն:

8) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու երկրորդ փուլի միասնական քննությանը:

43. Միասնական քննությունների արդյունքների հետ անհամաձայնության բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.

1) դիմորդը արդյունքների հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00 կարող է բողոք դիմումը անձամբ հանձնել Արցախի Հանրապետության ԳԹԿ-ի պատասխանատու օպերատորին: Պատասխանատու օպերատորն ստացված բողոք-դիմումները Հայաստանի Հանրապետության ԳԹԿ է ուղարկում բողոքարկման ժամկետի ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում:

2) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է ընդունվել որոշում՝ քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա առաջին փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության բողոքարկման ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների երկրորդ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

4. ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄ ԵՎ ԲՈՂՔԱՐԿՈՒՄԸ

44. Ներքուհական ընդունելության քննությունների (այսուհետ՝ ներքուհական քննություններ) օրերն ըստ առարկաների հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

45. Ներքուհական քննությունների առարկայական հանձնաժողովի ստեղծումը՝

1) ներքուհական քննությունների անցկացման համար ԳԹԿ-ի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 10-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

2) քննական հանձնաժողովները կազմված են նախագահից, նախագահի տեղակալից և անդամներից:

3) քննական հանձնաժողովը կազմում է քննական աշխատանքների տարբերակները և քննական այլ նյութեր:

4) քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու ԳԹԿ է ներկայացնում հաշվետվություն, որի

պատճենը հանձնում է տվյալ բուհի ընդունող հանձնաժողովին:

5) ներքուհական քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

46. Ներքուհական քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

1) ներքուհական քննության քննական հանձնաժողովի նախագահը քննության օրը բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը:

2) դիմորդները քննասենյակ են մտնում դիմորդների ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան և դիմորդների ցուցակում ստորագրում իրենց անվան դիմաց:

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական) և քննության անցաթղթի համապատասխանությունն ստուգում են հանձնաժողովի նախագահը կամ պատասխանատու քարտուղարը:

4) ներքուհական քննություններն անցկացվում են տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան:

5) դիմորդի պատասխանը գնահատվում է 20-միավորանոց համակարգով:

6) անբավարար գնահատականները և 8, 18-20 միավորները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ:

7) դիմորդների վիճահարույց աշխատանքները գնահատվում են քննական հանձնաժողովի կողմից՝ քվեարկության միջոցով:

8) ներքուհական քննության արձանագրությունը, բացի քննական հանձնաժողովի նախագահից, ստորագրում են ևս 2 քննող դասախոս:

9) ներքուհական քննությունները տեսաձայնագրվում են:

47. Ներքուհական բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է նրա պատասխանի ավարտից անմիջապես հետո: Դիմորդն իրավունք ունի բանավոր քննության գնահատականը բողոքարկելու՝ դիմելով քննական հանձնաժողովի նախագահին՝ մինչև քննասենյակից դուրս գալը:

48. «Գծագրություն», «Գծանկար», «Գունանկար», «Նկարչություն», «Կոմպոզիցիա» առարկաների քննությունների արդյունքների բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը ներքուհական գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում:

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին: Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին:

3) դիմումում նշվում է ներքուհական գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ:

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները), մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում:

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված ներքուհական գրավոր քննության քննական աշխատանքը ստուգած անդամը քննարկում են

ներքուհական գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ:

6) բողոքարկված ներքուհական գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել:

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին:

8) ներքուհական գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում հրապարակվում է ներքուհական գրավոր քննության քննական կենտրոնում:

9) ներքուհական գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00-ի ընթացքում դիմորդը կարող է դիմել ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողովին:

10) ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մանկավարժական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում՝ գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին:

11) սույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է ներքուհական գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը:

12) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ կազմվում է համապատասխան արձանագրություն:

49. Հարգելի պատճառով ներքուհական քննությանը չներկայացած դիմորդներն ընդունող հանձնաժողով են ներկայացնում դիմում և բացակայությունը հիմնավորող փաստաթղթեր: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ընդունում է դիմումները, ստուգում և փաստաթղթերը ներկայացնում բողոքարկման հանձնաժողով՝ լրացուցիչ քննության թույլատրելու համար:

50. Ներքուհական քննության ընթացքում հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդի վերաբերյալ կազմվում է արձանագրություն հանձնաժողովի նախագահի, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի կողմից: Քննական հանձնաժողովի նախագահն արձանագրությունը ներկայացնում է ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողով՝ քննության ավարտից անմիջապես հետո: Բողոքարկման հանձնաժողովն արձանագրության հիման վրա որոշում է ընդունում քննությունն ընդհատած դիմորդին լրացուցիչ քննության թույլատրելու և օր նշանակելու մասին:

51. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը բացակայած կամ քննությունն ընդհատած դիմորդները չեն կարող հանձնել այդ քննությունը:

5. ԲՈՒՅԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

52. Բուհերի ընդունելության մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Միասնական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է ԳԹԿ-ում, իսկ ներքուհական քննությունների արդյունքներով՝ համապատասխան բուհում:

ԿԱՐԳ

53. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) մրցույթին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվում է մասնագիտության համար սահմանված ընդունելության մրցութային քննություններից ստացած միավորների գումարի նվազման կարգով: Անհրաժեշտ է նաև, որ ցանկի տվյալ մասնագիտության նշված մեկ աստղանիշով (\*) ընդունելության ոչ մրցութային քննությունից դիմորդը ունենա դրական միավոր: Ընդունելության ոչ մրցութային քննության արդյունքն է դիմորդի՝ միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի տվյալ առարկայից պետական ավարտական քննության գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

54. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Միասնական քննություններում դրական են համարվում 7,5 և բարձր միավորները: Ներբուհական քննությունների համար դրական են համարվում 8,0 և բարձր միավորները:

55. Հիմնական փուլի մրցույթն անց է կացվում ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված բուհի անվճար և վճարովի ուսուցման հայտի գերակայությամբ:

56. Առաջին հայտագրված բուհի մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված բուհերի հերթականությանը համապատասխան, եթե նշված բուհի տվյալ մասնագիտության համար առկա են թափուր տեղեր:

57. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտության որևէ բուհ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ բուհերի մրցույթին: Իսկ չընդունված դիմորդը ըստ հերթականության մասնակցում է հաջորդ բուհերի մրցույթին:

58. Արցախի պետական համալսարանի և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «\*» նշանով նշված մասնագիտությունների անվճար ուսուցման համակարգի մրցույթին կարող է մասնակցել նաև մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկայից ընդունելության քննությունից 6,0-ից մինչև 7, 25 միավոր ստացած դիմորդը: Առաջնահերթությունը տրվում է այն դիմորդներին, ովքեր մրցույթին մասնակցում են երկու առարկաներից միասնական քննություններից ստացած դրական միավորներով:

59. Մասնագիտության (կրթական ծրագրի) թափուր վճարովի տեղերի մրցույթին կարող է մասնակցել նաև մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշով (\*\*) նշված առարկայից ընդունելության քննությունից 6,0-ից մինչև 7, 25 միավոր ստացած դիմորդը:

60. Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի մրցույթին մասնակցում են Արցախի Հանրապետությունում գրանցում ունեցող և Արցախի Հանրապետության ուսումնական հաստատություններ ավարտած դիմորդները, ովքեր նախօրոք, ըստ հաստատված կարգի, հայտագրված են եղել համապատասխան մասնագիտությանը (կրթական ծրագրի) և հավաքել են տվյալ բուհի համար սահմանված ընդունելության քննությունների առավելագույն դրական միավորների հանրագումարի առնվազն 75%-ը: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային

անվճար տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Արցախի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս համապատասխան պետական մարմինների, կնքում է պայմանագիր՝ բուհն ավարտելուց հետո Արցախի Հանրապետությունում մասնագիտությամբ պարտադիր աշխատելու վերաբերյալ:

61. Ընդունելության մրցութային առարկաների քննություններից գումարային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

- 1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.
- 2) ներբուհական քննություններ հանձնած արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին՝ դիմում-հայտում համապատասխան մասնագիտություն հայտագրելու դեպքում.
- 3) հանրակրթական ուսումնական հաստատություններում 10-12-րդ դասարաններում սովորելու ընթացքում դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին, եթե այն համապատասխանում է տվյալ մասնագիտության ընդունելության քննությանը.
- 4) դպրոցի պետական ավարտական քննություններից միջին թվաբանական առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին.
- 5) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

62. Միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի գնահատականները 20 միավորանոց համակարգին հավասարեցվում են հետևյալ կերպ.

- 1) 10 միավորային համակարգով գնահատականները.  
ա. «4»-ը համարժեք է 9 միավորին.  
բ. «5»-ը համարժեք է 11 միավորին.  
գ. «6»-ը համարժեք է 13 միավորին.  
դ. «7»-ը համարժեք է 15 միավորին.  
ե. «8»-ը համարժեք է 17 միավորին.  
զ. «9»-ը համարժեք է 19 միավորին.  
է. «10»-ը համարժեք է 20 միավորին.

- 2) 5 միավորային համակարգով գնահատականները.  
ա. «3»-ը համարժեք է 13 միավորին.  
բ. «4»-ը համարժեք է 17 միավորին.  
գ. «5»-ը համարժեք է 20 միավորին:

63. Ըստ հայտագրված մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները դրական, նաև ցանկում երկու աստղանիշով (\*\*) նշված առարկաներից 6,0-ից մինչև 7, 25 միավորներ ստանալու դեպքում, Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդան դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ոստիկանության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գործառնականության և Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային անվտանգության ծառայության կողմից տված տեղեկանքների:

64. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդանություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդան երեխաները.

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

65. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և զորացրված դիմորդները՝ զորացրվելուց հետո, մեկ տարվա ընթացքում ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

1) ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով) անվճար ուսուցմամբ ընդունվում են՝ ըստ մասնագիտությունների՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի: Մրցութային հավասար միավորների դեպքում մրցույթը իրականացվում է սույն կարգի 61-րդ կետի պահանջների համաձայն.

2) տվյալ մասնագիտությունից Արցախի Հանրապետության կառավարության կողմից բանակից զորացրվածների համար անվճար տեղեր հատկացված չլինելու դեպքում անվճար ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով.

3) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում բուհի նույն մասնագիտության վճարովի ուսուցման համակարգ ընդունվում են մրցույթից դուրս:

66. Առանց ընդունելության քննությունների Արցախի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով, կրթության կառավարման պետական լիազոր մարմնի կողմից ճանաչված, միջազգային օլիմպիադաների անհատական մրցանակակիրները, ինչպես նաև տարբեր մառաչությունների, օլիմպիական խաղերի մեդալակիրները՝ մրցանակը ստանալուց հետո երեք տարվա ընթացքում ընդունելության դիմում-հայտում համապատասխան մասնագիտություն հայտագրելու դեպքում:

67. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլի արդյունքները հաստատում է մինչև տվյալ տարվա հուլիսի 18-ը:

68. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլի արդյունքները հաստատելուց հետո, բուհերում մասնագիտությունների թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական նաև ցանկում երկու աստղանիշով (\*\*) նշված առարկայից 6,0-ից մինչև 7,25 միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին: Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով հուլիսի 19-ից մինչև հուլիսի 26-ը՝ ժամը 18.00:

69. Դիմորդները ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությանը և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են թափուր տեղեր ունեցող մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի:

70. Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի մինչև երկու անվճար և մինչև վեց վճարովի մասնագիտությունների թափուր տեղերի մրցույթին, եթե ընտրած մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննություններից ունի դրական, նաև ցանկում երկու աստղանիշով (\*\*) նշված առարկայից 6,0-ից մինչև 7,25 միավորներ:

71. Թափուր տեղերի մրցույթի անցկացման

ման ժամանակ նախապատվությունը տրվում է տվյալ մասնագիտության ընդունելության մրցութային քննություններից առավել բարձր միավոր ունեցող դիմորդին:

72. Թափուր տեղերի ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրված հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին, իսկ չընդունված դիմորդը ըստ հերթականության մասնակցում է հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

73. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 30-ին:

74. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից հիմնական և լրացուցիչ մրցույթների արդյունքները հաստատելուց հետո դիմորդը բուհ ներկայացնում է՝

- 1) ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ (բժօրինակը).
- 2) ԳԹԿ-ի կողմից դիմորդին տրված մրցութային միասնական քննությունների արդյունքների վկայագիր.
- 3) լուսանկար (3 x 4 չափսի).
- 4) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական) բնօրինակը.
- 5) զինվորական գրքույկ (բժօրինակը)՝ առկայության դեպքում.
- 6) սույն կարգի 63-66-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.
- 6) միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմները.
- 7) ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթեր ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: Սույն կարգի 63-րդ և 64-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են նշված վճարից:

**6. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

75. Բուհերի ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 10 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նախարարի տեղակալը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Արցախի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, ԳԹԿ-ի տնօրենը, բուհերի ղեկավարները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է նախարարը:

76. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

- 1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները.
- 2) հաստատվում են սույն կարգի 63-66-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները.
- 3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ՆԿԻՐՅԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ

ԱՐՑԱՆԸ ՏՈՒՆ Է, ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Առանց լավ մարդու աշխարհը շատ դառն է՝ օժի լեղի...

Ավ. Իսահակյան

Նվիրվածությունը սահմաններ չի ծանաչում: Երբ մարդ նվիրվում է հայրենիքի շենացման լուսառաք գործին, նպատակն է չիք է դարձնում բոլոր արգելքները...



Նվիրվածությունը սահմաններ չի ծանաչում: Երբ մարդ նվիրվում է հայրենիքի շենացման լուսառաք գործին, նպատակն է չիք է դարձնում բոլոր արգելքները...

Թե ինչ երազանքներ ուներ Աշոտը, փորձում է հիմա անկեղծանալ. «Ուսանելու տարիներին ավելի շատ մտածում էի աշխատել ԴՀ դեսպանատներից մեկում, և քանի որ Պորտուգալիայում հայկական դեսպանատուն չկար, մտքովս անցնում էր, ավելի ճիշտ՝ երազում էի Պորտուգալիայում հայկական դեսպանատուն բացելու և այնտեղ աշխատելու մասին, սակայն Արցախը կանչում էր...»:

Ծրագրի ընտրությամբ՝ Աշոտն այժմ աշխատում է Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղի դպրոցում: Այն հարցին, թե ինչպես է կազմակերպում իր առօրյա աշխատանքը, նա մանրամասնում է.

- Շատ հագեցած է իմ գործունեությունը, ամբողջ օրը սաներիս հետ եմ լինում: Դասերից հետո՝ խմբակներ, արշավներ, հավաքներ ու համայնքային ծրագրեր... Խոստովանեմ, որ սկզբնական շրջանում դժվար էր երեխաների հետ շփվելը: Դե, գյուղի երեխաներ, ընկճվածություն, համարձակության պակաս և այլն: Ես ստեղծեցի այնպիսի մթնոլորտ, որ ամեն աշակերտ ինքը փորձի իր ուժերը, կարողանա վստահ ներկայանալ: Այլևս իրենք էին առաջարկություններ անում, նախաձեռնում քայլեր: Փորձում եմ խմբակների աշխատանքները ճիշտ կազմակերպել՝ անգլերենի ուսուցում, քաղաքացիական կրթություն: Համայնքային ծրագրերը իրողություն են դառնում փոփոխությունների հիման վրա՝ միմիայն ուսումնառությամբ:

Աշխատանքը ինձ համար առաջին հերթին ինքնադրսևորվելու միջոց է ու հնարավորություն՝ հմտություններով կիսվելու, գիտելիքներ փոխանցելու, մարդկային հարաբերություններ ձևավորելու համար: Կարելի է ասել՝ աշխատանքի մեջ եմ գտնում իմ հոգեկան խաղաղությունը:

Արցախ աշխարհը ինձ համար տուն է, հայրենիք ու Հայաստան (հեղ-այս գաղափարի խոստում փաստն էլ իր նվիրվածությունն է): 44-օրյա պատերազմի ժամանակ մենք բախվեցինք մի դաժան իրականության, որից բոլորս էլ հիասթափված ենք: Մարդու իրավունքների մասին բարձրագույն հայտարարություններ անող Եվրոպայի իսկական դեմքը փուչկի պես պայթեց պատերազմի օրերին, և ես հաս-

կացա, որ հայի իրավունքը պորտուգալացուն հետաքրքիր չէ... Այդ պատերազմը շրջադարձային կետը դարձավ իմ մղումների, որոշեցի վերջնականապես, որ պիտի մնամ Արցախում ու պայքարեմ նրա շենացման համար: Պատերազմի 44 օրերը մեզ ապացուցեցին, որ որևէ բանում վստահ լինելը դեռևս վերջնական չէ»:

Աշոտ Գաբրիելյանը մեր ժողովրդի փրկության համար ունի իր պատկերացումները, որ բանաձևում է այսպես. «Մեր սխալների մեծ մասը գալիս է կրթության պակասից: Կրթություն, կրթություն և էլի կրթություն, քանի որ միայն կրթված հասարակության պայմաններում կարելի է լիարժեք պետություն կառուցել: Իմ բոլոր ջանքերը միմիայն այդ նպատակն են հետապնդում: Շատ ուրախ եմ, որ օրեցօր ավելանում է այն երիտասարդների թիվը, որոնք Արցախում արժանատի ծագելու, ամրանալու, զարգացմանը նպաստելու կարևոր ծրագրեր ու կամք ունեն: Մեր Ծրագրով արդեն 17 երիտասարդ եկել է Արցախ (նախորդ տարիներին 5-6 էր, առաջին տարում՝ 1-2), 100 հոգի էլ Հայաստանի տարբեր մարզերում ու գյուղերում են: Առաջին տարին է, որ Սյունիքում ներդրվում է Ծրագիրը, և 6 հոգի մասնակցում են, որոնց թվում կան

Իսպանիայից ժամանած երիտասարդներ. ոմանց անձամբ եմ ծանաչում, Ավադեմիայում միասին ենք ուսանել: Շատ մոտ ընկերներով (3 հոգի) դիմել ենք Ծրագրին, քարտեզի վրա էլ պայմանական եռանկյունի ենք գծել՝ Չորաթան (Տավուշի մարզ), Գետաշեն (Արմավիրի մարզ) և Կոլխոզաշեն (Արցախ): Շփումը սերտ է (հեռավար), կիսվում ենք մտահոգություններով ու նաև հաջողություններով: Մեծ երջանկություն է ունենալ գաղափարակից ընկերներ. իրար մոտիվացնելով՝ մոտիվացվում ենք նաև մենք, և աշխատանքի արդյունքը դառնում է ակնհայտ Արցախի և Հայաստանի համար:

Արցախահայության հոգսը ուսերին առած նվիրյալ երիտասարդը քայլեր է ձեռնարկում նաև Արցախը աշխարհին ծանաչելի դարձնելու գործընթացում և ունի իր տեսակետը, որ Արցախը առաջին հերթին մենք ինքներս պիտի լավ ծանաչենք, նոր միայն ներկայացնենք աշխարհին: Դա Աշոտի և իր ընկերների առաջին կարևոր քայլերից մեկն է, որին հաջողվելու են հետագա անելիքները:

Այսպես, Կոլխոզաշենը հնագիտական, պատմական հուշարձաններով հարուստ ու չքնաղ բնություն ունեցող բնակավայր է, զբոսաշրջության իսկական կենտրոն դառնալու շատ մեծ հնարավորություններ ունի: Ասֆալտապատվում է գյուղ տանող ճանապարհը. այն մեծ հեռանկար ունի, եթե պետական բավարար ուշադրություն լինի:

Երիտասարդի նախաձեռնությունների ոգեշնչողները նրա սաներն են, որոնք սիրով հյուրեր են ընդունում, մասնակցում օլիմպիադաների, և այսպես ամեն մի փոքրիկ հաջողությունը մղում է հաջորդ քայլն անելու համար: Նրա սաներից մեկը՝ 12-րդ դասարանում սովորող Պարույրը, այսօր մեծ ցավ է ապրում, որ պիտի ավարտի դպրոցը և բաժանվի ընկեր Գաբրիելյանից: Կապվածությունը, բոլորի անսահման սերը նրան դարձրել են իսկական պաշտամունքի առարկա, և նրանից բաժանվելը չեն պատկերացնում: Ինքը՝ Աշոտն էլ սիրով ու հարգանքով է արտահայտվում դպրոցի կուլտիտիվի ու գյուղաբնակների մասին: Կուլտիտիվ, որ միշտ բաց է նորարարությունների առաջ, պատասխանակալ գործընկերներ՝ իրենց փորձով

կիսվող ու նաև խրախուսող: Ահա թե ինչպես է Աշոտին ներկայացնում դպրոցի փոխտնօրեն Իզաբելլա Խաչատրյանը.

- 2021-2022 ուստարում Աշոտն իր հետ լույս բերեց դպրոց և գյուղ: Մեր ծանոթությունը կայացավ օգոստոսյան խորհրդակցության օրերին: Բոլորս սիրով ընդունեցինք նրան՝ լուրջ ու խոհուն այդ երիտասարդին: Դպրոցի ոչ հարմարավետ և կենցաղային անշուք պայմանները չընկճեցին նրան, չխաթարեցին նրա գործունեությունը: Ծանոթացավ երեխաների հետ, նրանց գիտելիքներին ու անմիջապես գործի անցավ: Սովորողների օգնությամբ ծանոթացավ գյուղի հարուստ պատմական անցյալին ու ներկային, մշակութային արժեքներին, բնական ռեսուրսներին: Իր Ծրագրի համաձայն կազմեց ՓՅՈՒ-ի (փոփոխությունների հիման վրա ուսուցում) խումբ՝ «Ջանե» անունով (կոլխոզաշենցիները Աշոտին հարազատի պես են վերաբերվում և նրան դիմում են ամենաքաղցր «ջանե» բառով), և խմբակի պարապմունքներում վեր հանեց գյուղական ու դպրոցական կյանքի վերաբերող հիմնախնդիրները: Ընդամենը 2-3 ամսվա ընթացքում հասցրեց ավարտել «Կոլխոզաշեն» ծրագիրը և «Ջանե» երիտկենտրոնի ստեղծմանն ուղղված աշխատանքները: Առաջին ծրագիրը միտված էր գյուղի զարգացմանը: «Ջանե»-ն նաև ծրագրային ինկուբատոր է, այսինքն՝ ՓՅՈՒ-ի միջոցով տեղի երիտասարդները իրականացնելու են համայնքային ծրագրեր: Բացի դրանից, այն ծառայելու է որպես ժամանցային կենտրոն, որտեղ իրականացվելու են կինոդիտումներ ու քննարկումներ: Ծրագիրն իրականացվում է «Լուսաբերդ» հիմնադրամի աջակցությամբ: Հենց Աշոտի անմիջական մասնակցությամբ մեր սաների առջև բացվեցին «Թունո»-ի դռները: Որպես մասնագետի՝ նրան համարում ենք իր գործի անխնայ նվիրյալ, ողջախոհ, լայն աշխարհայացքով, շփման մեծ շրջանակներ, համակողմանիորեն զարգացած անհատ, որի շնորհիվ մեր սաները քայլ առ քայլ մոտենում են հաջողությունների բանալուն: Բառերը քիչ են՝ նրան արժանավայել բնութագրելու համար: Նման երիտասարդների կարիքը Արցախը շատ ունի, իր խոսքն այսպես եզրափակեց փոխտնօրենը:

Աշոտի բարձր պատասխանատվությունը գալիս է ընտանեկան դաստիարակությունից: Ընտանիքում բոլորն են օժտված այդ զգացողությամբ: Ահա թե ինչ է պատմում Աշոտի դպրոցական տարիներից նրա մանկավարժ մայրը՝ Սուսաննան. «Դասվարդ հանձնարարել էր երեխաներին կոճակ բերել դպրոց՝ աշխատանքի ժամին աշխատելու համար: Աշոտը առավոտյան է հիշում ուսուցչի հանձնարարությունը: Եվ քանի որ բոլորու շտապում էինք աշխատանքի, ասացի՝ ժամանակ չկա փնտրելու, վաղը կտանես, ինքն էլ թե՛ չեմ գնա դպրոց: Այդ պահին Սաթիկ տատիկը գտնում է հնարը. պոկում է հագի ժիլետի կոճակները, տալիս Աշոտին, որն ուրախ-ուրախ վերցնում է ու շտապում դպրոց:

Երեք որդիներս էլ այդպիսին են, ես հպարտ եմ նրանցով: Ամենափոքրը՝ Տիգրանն էլ տեսել ու նրանցից է սովորել»:

Իրոք, Աշոտ Գաբրիելյանի միակ ցանկությունը Արցախի շենացումն է, նրա լուսավոր ապագայի ստեղծումը: Նրա համար առաջանայինը նվիրվածությունն է իր երկրին ու հասարակությանը, դրա համար էլ դեռ անձնական կյանքով զբաղվելու ժամանակ չունի:

Թող այսպիսի երիտասարդների թիվը սովորաբար, ու շեն մնա Արցախ աշխարհը:



ԼԻՆԵԼ ԱՌՈՂՋ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ

ՄԻՐԵ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ ԿԱՆԱՅՔ ՈՒ ՄՊՈՐՏԸ

Մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ նպատակային ենք համարում քննարկել սպորտի և կանանց ու աղջիկների համատեղելիությանն առնչվող կարևորագույն թեմաներից մեկը: Մարզական էջում հաճախ ենք անդրադառնում Արցախի մարզուհիներին, որոնք պրոֆեսիոնալ սպորտով են զբաղվում, կարողանում են միջազգային մրցասպարեզներում լավ արդյունք ցույց տալ՝ այդպիսով ցույց տալով նաև, որ հայի ոգին ու կամքն անկտրում են՝ լինի տղա, թե աղջիկ: Եթե առիթ եք ունեցել գոնե մեկ անգամ դիտել մեր հայտնի աղջիկ մարզիկների ելույթները, հատկապես մենապայքարային մարզածեսերում, ապա հիշել եւ համաձայն եք հայտնի ասացվածքին, որ «առյուծը առյուծ է, լինի էգ, թե ործ»:

Տվյալ դեպքում մենք չենք դիտարկի պրոֆեսիոնալ սպորտով զբաղվելը, որը հաճախ համատեղվում է վնասվածքներով եւ իր մեջ ներառում է օրգանիզմի համար մեծ ծանրաբեռնվածություն, ինչի հետևանքով մարդն արագ կարող է հյուսվել՝ առողջությունը վնասելով: Պրոֆեսիոնալ սպորտն ամեն մարդու համար չէ: Խոսենք սպորտի՝ որպես ժամանակակից կյանքի անհրաժեշտ տարրի մասին:

«Սպորտ» հասկացությունը ծնվել է դարեր առաջ, այն ժամանակ, երբ դա ավելի շատ ինչ-որ արարողակարգեր էին, որոնք թույլ էին տալիս տղամարդկանց ցույց տալ իրենց իշխանությունն ու հեղինակությունը: Այդպես է սպորտը դարձել զբաղմունք, որը հատուկ է տղամարդկանց:

Կյանքի դրվածքն ի սկզբանե իրենից ներկայացնում էր տղամարդկանց և կանանց գործառույթների խիստ բաժանում: Որսով, ավարով, պաշտպանելով, կռվելով, վտանգներով զբաղվում էին տղամարդիկ, իսկ երեխաներ ունենալը, նրանց մասին հոգ տանելը, ընտանեկան օջախի պահպանումը մտնում էին կանանց զբաղմունքների մեջ: Երկուսի՝ թե՛ տղամարդու, թե՛ կնոջ արժեքն էլ, հատկապես ընտանիք կազմելիս, որոշվում էր՝ ելնելով վերոնշյալ հատկություններին համապատասխան լինելու հիման վրա: Կնոջ արժեքավոր լինելը կախված էր նրա հմայիչ և առողջ լինելուց, ինչով նա կգրավեր տղամարդուն՝ բազմացման համար. կկարողանար առողջ երեխաներ ունենալ, եւ կարևոր էր, որ ուժ մնար նրանց մեծացնելու համար: Իսկ տղամարդուց անպայման պահանջվում էր ֆիզիկական ուժ, առավելագույն դիմացկունություն ու ռեակցիայի արագություն, որպեսզի ի վիճակի լինի ընտանիքը կերակրել:

Համապատասխանաբար, «արեւի տակ տեղ ունենալու համար» պայքարում կանանց գործը, հատկապես մինչ ամուսնանալը, կայանում էր իրենց գեղեցկությունն անընդհատ ապացուցելու մեջ, ընդ որում, դա պետք էր միայն մինչեւ բազմանալը, իսկ տղամարդիկ պետք է ցույց տային, որ իրենք ամենաուժեղն ու ճարպիկն են, բայց նրանք դա պետք է ապացուցեին ամեն օր, մինչեւ կմեծանային երեխաները եւ ընդունակ կլինեին կերակրել իրեն:

Այս գծապատկերը փոխշահավետ գործարք էր, որի նպատակը երկուսի համար էլ տոհմի կյանքը շարունակելը եւ կուշտ ծերություն ապահովելն էր: Հնարավոր է, որ հենց այդ ժամանակ էլ սկսել է առաջանալ «ընտանիքի ինստիտուտ» հասկացությունը,

որի հիմքում ընկած էին կենսական կարևոր գործառույթներ:

Այդպես է եղել միշտ: Իսկ հիմա՞, երբ կարիք չկա մամոնների հետեւից ընկնել ու ինքնուրույն մշակել հեկտարներով դաշտեր՝ սնվելու համար, իսկ ծերության ժամանակ սովից չմեռնելու համար կարիք չկա առավելագույնս բազմանալ երիտասարդ ժամանակ:

Երեխաները դադարել են ապրելու միջոց լինելուց: Կինը տղամարդու համար դարձել է ոչ միայն երեխաների համար մայր: Տղամարդն ուզում է իր կողքին տեսնել կնոջ՝ մարդու, որն արժեքավոր է ինքնին, ունի արտաքին գրավչություն, հմայք, կիսում է իր հետաքրքրությունները, ցուցաբերում է փոխըմբռնում: Երեխաներն ընտանիքի բաղկացուցիչ մեծ մասն են, բայց արդեն՝ ոչ մի-

վարքագիծ, որը հարյուր տոկոսով ապահովում է խնդիրներ ապագայում:

Հոյակապ շրջագեստներ հագցնելով, զանազան ժապավեններով զարդարելով՝ ծնողները հաճախ իրենց երեխաներին տիկնիկ են դարձնում, արգելում են իրենց աղջնակին վազել եւ թռչկոտել մյուս երեխաների հետ: Քարոզը հետեւյալն է. «Այդպես են իրենց պահում տղաները, իսկ դու աղջիկ ես, դե, նայիր քեզ»: Ինքը՝ երեխան, նայում է իրեն, բայց դեռ չի կարողանում հասկանալ, թե ինչի մասին է խոսքը, սակայն վստահում է ծնողներին եւ սկսում է կամաց-կամաց ձեւավորել «ճիշտ» վարքի մասին հասկացողություն: Մինչ դպրոցական տարիներին տղաներն ակտիվ խաղում են ֆուտբոլ, հաճախում են մենամարտային մարզածեսերի, պարապում են մարտարվեստներ, աղջիկներ-



ակը: Շատ կանանց համար առայժմ դժվար է դա գիտակցելը: Կենտրոնանալով երեխայի վրա՝ նրանք հաճախ դադարում են իրենց մասին հոգ տանել, եւ որպես հետեւանք՝ մոռանում են նաև ամուսնու հետաքրքրությունների մասին: Այդտեղից էլ գալիս են մեծ հիասթափությունները եւ անկեղծությունները, երբ արդեն փուլզվում են ընտանիքները:

Որտեղի՞ց վերցնել այդ գիտակցումը, երբ դարերի խորքից կինը հոգ է տարել միայն այն մասին, որ քանի դեռ բնատուր գեղեցիկ ու ջահել է, արագ եւ շահավետ ամուսնանա: Եվ գեղեցկությունը պահելու փոխարեն, կինը ավելի շատ զբաղվել է զարդարելով այն, ինչը տրվել է բնությանը: Բայց բնությունը ինչպես տվել, այնպես էլ վերցրել է ծննդաբերությունից հետո: Անցյալում դա բավարարում էր կնոջը. կարիք չկար դրանից հետո էլ հոգալ արտաքին տեսքի մասին: Սակայն այսօր կնոջ համար դժվար է իր կողքին պահել «անհրաժեշտ» տղամարդուն՝ հենվելով «հիմնավոր» վարքագծի եւ համոզմունքների վրա: Այժմ կնոջն անհրաժեշտ է լինել հմայիչ եւ ամուսնությունից հետո, եւ ծննդաբերելուց հետո: Շրջահայացք ունենալը, տեսնելը, թե ինչ ունենք եւ ինչ կարող ենք անել դրա հետ:

Դաստիարակության համակարգը, սոցիալական նորմերը քարոզում են, որ կանանց ֆիզիկական զարգացումը պետք է սահմանափակվի ավել ճարպի բացակայությամբ, մարմնի գեղեցիկ կազմվածքով, այն էլ՝ մինչեւ ծննդաբերելը, իսկ հետո ուրիշ խնդիրներ են. չէ՞ որ երեխաներն ամենակարևորն են կնոջ համար: Աղջիկների, ապագա կանանց եւ մայրերի մոտ ձեւավորում են այնպիսի

որ լավագույն դեպքում պարի են գնում: Դեռահասության շրջանում հատկապես աղջիկների մոտ ի հայտ է գալիս այն համոզմունքը, որ սպորտն այնքան էլ աղջկա բան չէ, դա տղաների համար է:

Որոշ ծնողներ էլ տրվում են իրենց աղջիկ զավակների՝ «Ֆիզկուլտուրա» առարկայից ազատվելու ցանկությամբ եւ պատճառ են բռնում, թե երեխան հիվանդկոտ է, պետք չէ նրան ծանրաբեռնել, հազիվ դասերն է հասցնում: Իսկ այդ ընթացքում երեխան համացանցով դիտում եւ ներծծում է մոդայիկ հագուստի մասին թեգեր, գայթակղվում է կոսմետիկայի գովազդներով, զանազան դիետաներ է սովորում, բայց ոչ՝ ֆիզիկական կուլտուրայի զարգացում:

Գուցե եւ իրավացի են այն մարդիկ, ովքեր համարում են, որ սպորտն աղջկա բան չէ: Դիցուք դա այդպես է: Ահա դրան բնորոշ պատկերը: Աղջիկը դադարում է 10-12 տարեկանում ակտիվ վազել, ցատկել, դադարում է շարժողական ակտիվությունը, համոզված է, որ սպորտն իր համար չէ, դպրոցում մեծ մասը նստած է անցկացնում, դպրոցից հետո դասապատրաստմամբ զբաղվելիս նստած է լինում, համակարգիչն ու հեռախոսը նույնպես նստած կամ պառկած դիրք են պահանջում: Դրան զուգահեռ կատարվում է հորմոնային մեծ փոփոխություն, որն այլ բաների հետ արտահայտվում է նաև կոնքերի եւ որովայնի մասերում ճարպի կուտակմամբ: Եթե բարձր նյութափոխանակություն ու աճի համար ընդունակ օրգանիզմը թույլ է տալիս դեռահասներին որոշ

ժամանակ դեռ լավ կեցվածքում մնալ, ապա ավելի ուշ՝ ճարպերից ու ածխաջրերից բաղկացած սնունդը, դրան գունարած՝ անշարժությունը օրվա ութ ժամվա մեջ առանց ֆիզիկական լրացուցիչ ծանրաբեռնվածության, կազմվածքը դարձնում են ոչ այնքան հմայիչ, իսկ դիմադրողականության չափանիշները հավասարվում են գրոյի: Դրանից հետո էլ սկսվում են առողջության հետ կապված խնդիրները: Երիտասարդությունն ու բնությունից տրված առողջությունը դեռ թույլ են տալիս դիմանալ եւ գրավել տղամարդկանց: Բայց ծննդաբերությունից հետո բնությունը շնորհակալություն է հայտնում կնոջը՝ կատարված կենսաբանական գործառույթի համար ու թողնում է, որ կինն ինքը որոշի, թե ինչ կլինի իր մարմնի ու առողջության հետ, եւ ինչով նա հիմա կգրավի տղամարդկանց: Սկսում են մարզադահլիճ, մարզադաշտ կամ լողավազան այցելելու փորձերը: Սակայն, քանի որ օրգանիզմը սովոր չէ ծանրաբեռնված լինելուն, իսկ սպորտով պարապելու ձգտումն առաջացել է անճարությունից դրված, առաջանում են վնասվածքներ, հիասթափություն, արդյունքում կանայք թողնում են պարապմունքները եւ շարունակում գիրանալ ու հիվանդանալ: Այս պատկերն ավելի հաճախ դառնում է սովորական, բայց դա այն չէ, ինչ կուզեինք տեսնել:

Դիտարկենք հաջորդ պատկերը: Կանանց համար կյանքը հեշտ չէ, այդ պատճառով պետք է պատրաստ լինել դժվարություններին, ֆիզիկական եւ հոգեկան ծանրաբեռնվածություններին: Ընդ որում, այդ պատրաստվածության հիմքը պետք է դնել մանուկ հասակում: Պետք է գովազդել ոչ թե հագուստն ու կոսմետիկան, այլ ֆիզիկական գեղեցկությունը եւ առողջությունը, սերմանել երեխայի մեջ ֆիզիկական զարգացման շնորհիվ մարմնի գեղազիտական գեղեցկության մասին հասկացողություն: Գուցե եւ պետք չէ թողնել երեխաներին այն տատիկների դաստիարակությանը, որոնց համար երեխան միշտ միհար է եւ իրենց գլխավոր առաքելությունը երեխային լավ կերակրելն է, որը արդյունքում կարող է վնասել նրանց առողջությանը, այլ հնարավորություններ ստեղծել հենց մանկությունից երեխային ընտելացնելու ակտիվ կենսակերպին՝ մարզական ճամբարների, երեխաների համար նախատեսված ֆիթնես պարապմունքների, մարտարվեստների խմբակների տանելու միջոցով: Ովքեր տեղյակ չեն, շտապենք ուրախացնել, որ Արցախում գործում են զանազան մարզական խմբակներ, որտեղ առանձին կամ համատեղ մարզումների են գնում աղջիկներ, որոնց թիվը բարեբախտաբար աճում է:

Հավանաբար ձեզ մոտ էլ կգտնվեն կյանքն ավելի լավ, իսկ ձեր երեխաներին առողջ ու երջանիկ դարձնելու շատ տարբերակներ՝ նրանց ներարկելով ժամանակակից աշխարհում կյանքի համար անհրաժեշտ համոզմունքներ: Թող սա հիշեցնում լինի՝ գուցե պետք է ինչ-որ բան փոխել:

Նկարում՝ Ստեփանակերտի մանկապատանեկան մարզադպրոցի վոլեյբոլի մարզուհիները:

ՄԻ ՊԱՏԱՌԻԿ

«ԾՆԻՐ, ԱԶԳ ԻՄ, ՈՐ ԾՈՎԱՆԱՍ»

Շիրազի «Անտիպ էջեր» գրքի III հատորից (եր., 2020 թ.), կազմողներ՝ Ս. Մուրադյան և Վանանդ Շիրազ



Հայ իրականությունում լավագույն գեղագիտական աշխատանք՝ Հ. Շիրազի «Անտիպ էջեր» երրորդ գրքի վերջում տեղադրված է «ԾնիՐ, ազգ իմ, որ ծովանաս» ծավալուն բանաստեղծությունը՝ «Ողբերգություն» ենթավերնագրով, որը նեղ անձնական տիպի զգացումների արտացոլման հիման վրա կերտված գործ է՝ սիրո և հավատարմության ենթաթեմայով: Այդ գործի ենթաթեման հայ ընտանիքի կայունության, ամրության, մարդկային երջանկության համազգային ընդհանրացումն է: Դրա խորհուրդն ու նշանակությունը համամարդկային են:

Այդ գործի մասին (տողատակին) ԵՊԳ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի անվանի գիտնական Ս. Մուրադյանը նշել է, որ առաջին անգամ է ներկայացվում, և պարզել է վերնագրի հարցը՝ նույնությամբ ընդօրինակված է բանաստեղծի որդու՝ Վանանդ Շիրազի մոտ պահվող ամբողջական բնագրից: Վերնագիրը նախապես եղել է «Նախատինք», սակայն հեղինակը, հավանաբար, այն համարելով ավարտուն և էլենելով բովանդակային իրեն հայտնի պահանջներից՝ կարմիր թանաքով ջնջել և ավելացրել է ներկա վերնագիրը:

Հանրահռչակ բանաստեղծի ծավալուն այդ գործը (էջ 306-311) մանրամասնված պարունակում է բանաստեղծի ու իր մոր՝ Աստղիկի կողմից մեծ զավակ Արայիկի խնամքի տանջանքները՝ առանց մոր՝ Ս. Կապուտիկյանի օգնության (կես տարեկանից երեքուկես տարեկան): Հովի. Շիրազից ու Ս. Կապուտիկյանից ծնված ապագա քանդակագործ ու նկարիչ Արայիկը աշխարհ է եկել 1941թ. հունիսի 8-ին: Գրողների միության համամիութենական հավաքին Ս. Կապուտիկյանը հրավիրվել ու մասնակցել էր: Անվանի բանաստեղծ Հով. Շիրազը, նկատելով Ս. Կապուտիկյանի ճանկորդական պատրաստությունը, ապշել է (վեց ամսական մանչուկի մոր հեռավոր տեղ մեկնելը միամիտ բանաստեղծի համար անընդունելի էր): Բռնկում Օճիկը պայթել է կովկասյան տղամարդու անմիջականությամբ, որ այդպիսի կինը էլ ուղք չդնի իր տունը: Բանաստեղծուհին շատ հանգիստ հասկացրել է, որ համաձայն է ու այդպես էլ կատարել է՝ ուղք չի դրել անուսուր բնակարանը, թեև ուզում էր մանկիկն այդտեղ էր. բանաստեղծուհին արդեն հավատացել ու վստահել էր Շիրազի մոր՝ տիկին Աստղիկի հոգածությանը: Այս վավերագրական բանաստեղծության վերաբերյալ Ս. Մուրադյանը ցավով մատնանշել է. «...Պատկերներում սուր հակադրության մեջ հայտնված կողմերից միայն մեկի ընկալումն է արտացոլված (հոր՝ Շիրազի-Ս.Ս.), որով չենք կարող հետահայաց բնութագրել մյուս կողմին: Բայց այս վավերական գրվածքի մեջ արտահայտված են փլուզված ընտանիքի, անօգնական զավակի անորոշ ճակատագրի համար տագնապող դառնացած, բարի ու սիրող հոր հոգեկան տվայտանքները, ծայրահեղ լարումներն ու դրամատիկ խռովքը, որ հեղինակն ինքն ենթավերնագրով անվանել է «ողբերգություն»:

Գեղագիտական ցավալի ընդհանրացմամբ սկզբից տրվել է մանկան հայացքային կարոտի առեղծվածը, ներքին խոսքի ինքնախոսությամբ փորձ է կատարվել վերլուծելու անհասկանալին, ճարտասանական հարցադրումներով խորացվել է ինքնագրույցը, մանկան հոգեբանական նկարագրության ինքնատիպ գեղագիտական աստիճանավորմամբ վեր են հանվել հայացքային արտահայտությունները, մեղսակից ծնողի հոգեբանական դաժան ասպարեզների խոստովանությունները (այսպիսի հոգեբանական ասպարեզների նկարագրության ժամանակ բարդ ստորադասական նախադասության երկրորդականները երբեմն բուրժուական տրոհվել՝ սրելով հնչերանգային արտահայտությունները):

Իմ բալիկի լույս աչքերին մութ մի կասկած է անթելվում,  
Թե չէ ինչո՞ւ թարթիչներով հոնքերը հոր դեմ են աղեղվում,  
Թարթիչների նետիկներով սիրտն է խոցում խաբված իր հոր,-  
Ի՞նչ վիշտ ունի խեղճ մանուկս՝ ծերուկի պես խորհրդավոր:  
Երբ նայում եմ իր աչքերին, մեջն անլեզու սիրտն է ճշում,  
Ո՞ւմն է տենչում հոր գրկում էլ, ո՞ւմ է գաղտնիքն իր անրջում:  
Ո՞ւմ վշտով է անհույս մնչում, վեր է թռչում ո՞ւմ կարոտից (էջ 306):

Հայրական խեղճ ու տանջալից գեղագիտական մղկտանքները իրավիճակի ինքնավերլուծությամբ տրվել են հոգեբանական բարդ իրավիճակներում: Զգացական ցավալի նրբություն-

ները ցանկացած ծնողի հասանելի, ընկալելի են: Հայացքային հոգեբանական նրբերանգները տրվում են համամարդկային ընկալելի փոխանցմամբ:

Ասես իր հոր աչքերի մեջ մանուկն իր մորն է որոնում (306): Առանց մայր է նա մնացել՝ դառնությամբ ընդհանրացնում է մանուկ հասակում հորը կորցրած բանաստեղծը: Նա տառապալից ցավով ու գեղագիտական հնարանքի խորությամբ համարել ու հակադրել է համամարդկային նվազագույն պահանջներ:

Միայն մայր է ձագս կանչում, ես՝ կին-ընկեր, ես՝ հոգեբույր (306):  
Ջավակի պահանջները խորն են, բանաստեղծ հայրն անգոր է լուծելու մանկան ֆիզիկական, զգացական, հոգեբանական պահանջները: «Միայն մայր է ձագս կանչում»:

Դեռևս մայրական կաթով սնվող մանչուկն իր կերն է պահանջում բնական ուղիով (80 տարի առաջ քաղաքային պայմաններում շատ դժվար էր այդ հարցի լուծումը): «Նա կարոտ է կաթնաղբյուրի...», - ցավով միջնորդել է գեղագետը՝ հավելելով իր տանջանքներն ու առնական պահանջները:

...ես՝ համբույրի՝ գեթ մի մաքուր,  
Նա՝ ստինքին իր մայրասուրբ, ես՝ անառիկ, կուրծք ու սրտի (306):

Հայրական հոգու պոռթկումը, նրբագին նկարագրությունը բնական է, համամարդկային:

Նա՝ մոր կաթի, ես կարոտ եմ մոր կաթի պես անաղարտի,  
Մոր արցունքի աղի նման անաղարտի, որ չգտա,  
Գտա, բայց, ա՛խ, երազներիս աղբյուր չեղավ անաղարտյա,  
Վառ չպահեց օջախս սուրբ, ձագիս թողեց մոխրի կողքին,  
Լքեց ողջը՝ նմանվելով շրջմոլիկված իր լուսնյակին...  
Աղի են իմ արցունքներն արցունքի պես ձագիս անմեղ... (306-7)

Որք հոր՝ բանաստեղծ Հովի. Շիրազի սիրտն է մրտում՝ այս ամենը տեսնելով:

Մայրական թոթովանքով մորն է տենչում, մորն է կանչում,  
Կոծում, ճշում, ես է կանչում, տուն է կանչում մորն հեռացած...  
Նախատուն է անմեղությունը՝ հոր գրկում էլ, ինչպե՞ս չլսամ,  
Գլուխս ո՞ր քարին զարկեմ, էլ ո՞ւմ ոտքը գանգատ գնամ,  
Որ ճշում է, մեղքում է, նույնիսկ մանուկ իր լուսնյակին:

Ա՛խ, բալիկս ի՞նչ իմանա, որ ճշում է իմ ողբն էլ բամբ (307):  
Բնական է, խաբուսիկ են հանգիստն ու քունը: Կրկնվում են նոր ճշոցներով, ծնողի համար անհավաքելի մարգարիտներ թափելով:

Ծերուկ մայրս քնահարած վեր է թռչում մեջ գիշերին,  
Գրկում գոռուն օրորոցը՝ կուրծքն է հպում շրթունքներին,  
Իմ հույսի պես դատարկ կուրծքը, թառամած իր կուրծքը թառամ,  
Արցունք կուզա ծեր ստինքից, ա՛խ, աստված իմ, ո՞նց չգոռամ (308):

Եվ այսպես հոր գրկում էլ մոր կարոտից հավիղ մոմ է բալիկս անխոս,  
Ու դառնում է մոլոր սիրտս երկու շամփրով զարկված մի որս (308-9):

Հեղինակին թվում էր՝ մայրը (Ս. Կապուտիկյանը) կզգա որդու մանկական անմահաց աղբյուրները, հետ կզա՞ մի կողմ թողնելով իր կանացի հայարտությունը, բայց, ավա՛ղ, դա խաբկանք ու երազանք էր: Որդու ցավից տանջվող հայրը հանձն է առել հոգեբանական իր պարտությունը որդու առաջ:

Կայծակում են արցունքներս սրբակարոտ իմ անեծքում...  
(Որդին) Ի՞նչ իմանա, որ քարասիրտ ինկուբատոր էր մայրը լուռ (309):

Մեծ հեղինակը գեղագիտորեն թարգմանել է պստիկի հոգին ու հոգեբանությունը:  
Բայց չգիտե՞ ո՞ւմ կանիծե ձագս՝ իմ չար բախտին գերի:  
Լուռ ճշում է՝ ինձ մի՞ գրկե, մի՞ համբուրե, մի՞ հեկեկա,  
Էլ իմ անուշ հայրիկը չես, երբ օրոցքիս մայրս չկա...  
Ու կարդում եմ թաց աչքերում հազար ու մի բոց նախատինք,  
Մանկուց լացող աչքերի մեջ՝ տեսնում փլված մի ընտանիք (309-10):

Հովի. Շիրազն ըմբոստացել է կյանքի յուրատիպ առաջընթացի դեմ:  
Առանց մոր գիլի ո՞նց մեծանան հոծ բալիկներն հորից մեծակ,  
Ա՛խ, ի՞նչ գոռամ, իմ կես որդուկ, ինչպե՞ս կարդաս գիրքը սրտիս (310):

Այնուհետև հորդորել է որդուն ներողամիտ լինել մոր նկատմամբ, բարեհոգի ու մեծասիրտ նայել աշխարհին: Հոգեբանական նրբամիտ կառույցները ցավատանջ հոգու լավատեսական արտահայտություններ են:

Երբ մեծանաս՝ մոր կիմանաս, որ օրերում այս անպատում  
Քո ծով լացով անմեղությունն անմեղության սիրտն է ուտում,  
Անմեղությամբ քո մանկուղեղ, քո մշտանմեղ անգիտությամբ,  
Երբ մեծանաս՝ մոր կիմանաս՝ ներիր մորդ որդիասիրտ քո քնքշությամբ ... (310):

Հեղինակը մարդկությանն է պատգամել՝ Որ էլ ոչ մի որբ չմնա բոլոր աշխարհում այս որբաշատ (311):

Հոգեբանական բարդությամբ ու ընդվզումով առլեցուն այս գործը պարունակում է նաև բավականին նորակազմություններ, որոնք նպաստում են խոսքի կապակցումների կրճատմանը, հանգավորմանը, գեղագիտական նոր խոսքի դրսևորմանը: Դրանք կազմությամբ բաղադրյալ են՝ ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր ինչպես՝ ամուլվել, գլխարկիկ, գոռուն, դրախտաբեր, հազարատոհմ, մեծամրմուռ, մշտանմեղ, նետիկ, նորաթոթով, նորալուսնակվել, շրջմոլիկվել, որբաշատ, որդիասիրտ, սրբակարոտ և այլն: Եռաբաղադրիչ բարդությունը մեկն է՝ մեծամրմուռ, քառաձայնով կազմությունն էլ մեկը՝ նորալուսնակվել: Դրանք նպաստում են հոգեբանական մտքերի հսկիործ ամբողջացմանն ու խոսքային բազմազանության ստեղծմանը:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ  
Բ.Գ. Թ., դոցենտ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԶԵՐ ՏՈՆԸ, ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԵՐ

Կանանց միամսյակ է, Ապրիլի 7-ը՝ Մայրության և գեղեցկության տոն: Այդ առթիվ ուզում եմ նախ շնորհավորել մեր որդեկորույս մայրերին: Գիտեմ, նրանց վիշտը շատ ծանր է: Ցանկանում եմ մեծ համբերություն այս ծանր օրերին, համուն մնացած երեխաների, բարեկամների ապրեն և հույս ու հավատ ունենան դեպի մեր ապագան:  
Ինձ համար էլ է շատ դժվար, որ չեմ կարող



այցի գնալ մայրիկիս, քույրիկիս ու աղջկաս գերեզմաններին ու ասել՝ շնորհավոր ձեր տոն օրը: Հիմա նրանց շիրիմները թուրքն է «հսկում»: Բայց այս վիճակին էլի դիմակայում եմ ու հույսով ապրում: Երանի եմ տալիս նրանց, որ հանգստանում են մեր հայրենի հողի գրկում: Հուսանք, որ մեզ համար մոր արև կծագի, կազատենք մեր հողերը գերությունից, և ամեն մարդ կվերադառնա իր հայրենի

օջախը: Դրա համար պետք է լինենք միաբան, հարեհաս լինենք միմյանց, չկորցնենք մեր ապրելու և արարելու տենչը: Արցախը բոլորիս կարիքն ունի, յուրաքանչյուրս նեցուկ լինենք նրան մեր կարեցածին չափով:

ՍԵՂԱ ԲԱՂԱՍՅԱՆ  
Թաղավարդի թոշակառու ուսուցիչ

ԳՐԱԿԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՎԱԳՆԵՐ

Վահան ԳԱԿՈՒՅԱՆ



Վահան Գակոյանը ծնվել է 1943թ. Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Հյուսիսային Արցախի Շամխորի, Իսմայիլիի շրջանների հայկական, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի գյուղերում:

Այժմ ապրում է Ստեփանակերտում: Վերջերս լույս է տեսել նրա «Լռություն» բանաստեղծությունների երրորդ գիրքը: Ներկայացվող բանաստեղծությունները հեղինակի նոր գրվածքներից են:

\*\*\*  
Չյուն է, ծնեռ,  
Ու գարունը  
Չի եկել դեռ:  
Հավքը գարթնել  
Հորանջելով  
Ուրախ-ուրախ  
Թևն է շտկում:  
Գարնանային  
Երգանք կա  
Օրվա մտքում:  
Փխոն պատել արևի տակ  
Խանութ-խաթուն,  
Իսկ տանիքից  
Չհավուցքի  
Ջուր է կաթում:  
Անտառը լուռ  
Ծառերը՝ մերկ

Լուռ անդորրից  
Ծիկրակում է  
Մի հավքի երգ:  
Սարը ճերմակ  
Չորը՝ թախտոտ  
Ու կարկամած:  
Սակայն հողը  
Մայրանում է  
Կամաց-կամաց:

\*\*\*  
Երեկոներին սովորականից  
Ավելի պարզ են  
Գույներն աշխարհի,  
Ավելի մեղմ է  
Փայփայում քամին:  
Ու գրավիչ է  
Անգույն անդորրը՝

Միրո համբույրի  
Նման հարագատ:  
Ավելի լայն է  
Գետակի հունը,  
Ավելի ազատ,  
Ուր հողը սև է,  
Քարերը՝ փայլուն:  
Ու թվում է քեզ  
Ստերմություն է  
Տարածվում այլուր...

\*\*\*  
Գարուն է, ինչպես  
Ինքն իր հոգու հետ  
Չրուցող հոգի...  
Գարուն է, և տես  
Իմ կամքից անկախ  
Ցնծում է հոգիս:  
Պարզ օդի գույն է  
Դարձել անդորրը,  
Երկնտանքի մեջ  
Բուրում է օրը,  
Վառված կանաչը  
Կամաց դողում է  
Եվ ապա շողում,  
Ցրում կանաչ բույր  
Աշխարհի վրա:  
Ժայռի կրծքին  
Օրվա փշռանքն է  
Մարում,  
Ու թվում է՝  
Իրիկնային  
Լռությունն այս  
Արարում...

\*\*\*  
Պարզամիտ պահը  
Կասկածն է հյուծել,  
Ուր գարնանային  
Օրը չի բացվել:  
Արփին լողում է  
Դեռ սարի ետև,  
Քամին շոյում է  
Անսանձ ու թեթև...  
Մանուշակներն են  
Նիրհում կիսաբաց.  
Կարծես շշնջում.  
- Բարև, լուսաբաց:  
Ինձ փայփայում է  
Անմեղ հավատս  
Չեն էլ կասկածում  
Թե որն է վատը...

\*\*\*  
Գարունը խաղ է՝  
Հունցված բնության  
Ու մարդու հոգուն:  
Գարունը բույր է  
Տարածված օդում,  
Արտույտի կանչ է՝  
Ամպի մեջ խրված,  
Թավիչ կանաչ է  
Դաշտերում փռված,  
Ամպ է քրքրված:  
Ու թռչող քամի,  
Անսանձ զրգոված  
Սիրոնած ժայռ է,  
Քար ու քարափ է,  
Անսանձ աղմկոտ  
Տեղատարափ է.  
Քարը կարապ չէ.  
Հուշն է տենչողը,  
Հոգին՝ թռչողը...

\*\*\*  
Քամին թռավ  
Մեր բակից,  
Երգում են սարերը,  
Անմոռուկի բույր հագած՝  
Հորանջում է արևը:  
Չորը հոգնել է մի քիչ  
Ուռին թախտոտ է թափում  
Թվում է, թե գարունը  
Չմռան ցավն է թոթափում:  
Քամին թռավ մեր բակից  
Երգում են սարերը  
Անմոռուկի բույր հագած  
Հորանջում է արևը...

\*\*\*  
Մայրամուտին,  
Երբ օրն է լուռ  
Դառնում թախտոտ,  
Երբ փայլում են  
Կածանները,  
Ու ջուրն օդի  
Գույն է դառնում,  
Ավազներից  
Ցուլքն իր խառնում,  
Ուր ամեն ինչ  
Կանգ է առնում:  
Չորը ահեղ  
Մթին- մթին  
Լուսինը՝ մերկ ժայռի քթին,  
Թվում է, թե  
Մայրամուտը  
Թովում է, թե  
Քո հոգին է  
Մայրամուտի  
Անմեղությանը մասնակից...

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ» ԱՏԵՂՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԱՐԱՓՈՐՄԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Պիտի հայերեն մտածել սովորեց»։ հիրավի, հենց իր հայեցի մտածողությամբ հայ գրականության էջերը զարդարեց Նոր Նախիջևանում ծնված, դարբինների տոհմի ժառանգ Դավարի ընտանիքի ազատատենչ գրողն ու հրապարակախոսը՝ Միքայել Նալբանդյանը: «Ժողովրդի համձայնորդ նրա լեզուն է, նրանով կարող ենք դատել ժողովրդի լուսավորության աստիճանի, նրա հատկությունների, բարքերի, սովորությունների, արժանիքների ու արատների մասին»: Եվ իր գրական լուսավորության աստիճանը համամարդկային ազատասիրությամբ ձևավորելով՝ նա կարողացավ իր ստեղծագործություններով նոր շունչ հաղորդել ոչ միայն ստեղծագործական ծիրքով, այլև իր «ազատություն» գաղափարով:

Միքայել Նալբանդյան գրողի ստեղծագործական ինքնատիպ գրիչը հյուսել է իր ժամանակաշրջանի հստակ պատկերը, որն էլ դարձել է արձակ ու պոեզիա: Պատահական չեն թեմատիկ լայն ընդգրկումները նրա ստեղծագործություններում, որոնք հաճախ համամարդկային ուղեմիջներով են ներկայանում: Նալբանդյանի մտքի ընթացքը, տողն ու տառը իրականության անշեղ վավերագրություն են: Նրա գրիչը միակ միջոցն է, որով ընթերցողի առաջ բացվում է պատկերավոր զգացմունքայնությունը, ապրելու գերող յուրահատկությունը, չկորցնելու և պայքարելու ազատասիրությունը:

«Վայր ընկնող աստղեր» ստեղծագործությունն առաջին հայացքից պարզ գրույց է հոր և դստեր միջև: Սակայն երբ անդրադառնում ենք գրողի պարզության խորությամբ, հասկանում ենք այն, ինչը կարևոր է, թե ինչպես ենք ապրում մենք: Միքայել Նալբանդյանն այս ստեղծագործության միջոցով առանց մարդուն նեղացնելու ներկայացնում է արժեհամակարգային խնդիրներ:

«Հայրիկ,- ասաց դուստրը հորը,-  
Կապույտ երկնքի վերա  
Որքա՞ն աստղեր փայլում են վառ,  
Անես համար, թիվ չըկա.  
Ասում են, որ ամենայն մարդ  
Աստղիկ ունի երկնքում:  
Ճշմարիտ է, ասա, հայրիկ,  
Ինձ որտե՞ղ է փայլում»:  
Ահավասիկ, այս հարցադրմանը հետևում է հոր պատասխանը՝ ընդգրկում լայնությամբ ու կառուցվածքաբովանակային հստակությամբ.

- Այր, դստրիկ, այդ աստղերը  
Ունին հաշիվ ու համար,  
Եվ մեզանից յուրաքանչյուր

Մի աստղ ունի յուր համար:  
«Հայրիկ, տես, տես, աստղը թռավ,  
Հետքից պայծառ գիծ թողեց.  
Աստղիկն ընկավ երկնքիցը,  
Մյուս անգամ այլ չէրկեց»:

Այս տողերը նաև բանաստեղծի պատմողական արվեստի մասին են փաստում: Նա մարդկային անկեղծության հայեցակետից է հանդես գալիս՝ վերախմբագրելով հասարակական խնդիրները և դրանք դարձնելով անձնական, մեկ-մեկ էլ՝ անանձնական: Բանաստեղծը, ինչ խոսք, ջանում է վերախմբաստավորել կյանքը՝ վերաբացահայտելով դրա գույների հմայքը:

- Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,  
Դա մեծատան մի աստղ էր,  
Որ յուր օրում, յուր կյանքումը  
Խիղճ ասածը չը գիտեր.  
Աղքատները նորա դռնից  
Գիշեր ցերեկ հալածված.  
Մի մարդ չը կար նորան ծանոթ,  
Որ չը լիներ վշտացած:

Խղճի մաքրության մասին այս տողերը ոչ միայն դաստիարակչական բովանդակություն ունեն, այլև արտացոլում են ստեղծված բարդ իրականությունը՝ ունևորի և չունևորի տարբերությունները՝ ոչ այնքան կոպիտ համեմատությամբ: Միանշանակ, հասկանալի է, որ կյանքի դժնդակ օրենքներին հայրը չի ցանկանում միանգամայն բացելիքաց ասել դստերը: Բանաստեղծը հորն ու դստերը կապում է առողջ արմատներով:

«Հայրիկ, տես, տես, աստղ թռավ,  
Հետքից պայծառ գիծ թողեց,  
Աստղիկն ընկավ երկնքիցը,  
Մյուս անգամ այլ չէրկեց»:  
- Ով իմ զավակ, մի՛ վրդովվիր,  
Դա աղջկա մի աստղ էր,  
Որ յուր հոր ու մորը խոսքը  
Յուր կյանքումը հարգած չէր.  
Նա փայտել էր յուրյանց տնից...  
Մուր էր քսել տան վերա...  
Յուր ծնողքը լացուցել էր,  
Ինչքը վատնել անխնա:

Բանաստեղծն ապահովում է ելման ու հանգման կետեր՝ մարդասիրական գծեր տանելով տարբեր հոգեվիճակներում ապրող երկու աշխարհներ: Պոետիկական մանրամասները շարունակվում են.

«Հայրիկ, դարձյալ թռավ մի աստղ,  
Վայր ընկավ նա երկնքից.  
Հայրիկ, ովի՞ աստղն էր արդոք,  
Որ գրկվեցավ յուր տեղից»:  
- Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր,

Կեղծավորի դա աստղ էր,  
Որ յուր օրում ուղիղ մի խոսք  
Մարդու երբեք ասած չէր.  
Փարիսական յուր ձևերով  
Աշխարհ խաբեց, զարմացուց,  
Այդ պատճառով աստված նորա  
Աստղի լույսը խավարցուց:

Ահա, վերոհիշյալ տողերում բանաստեղծական հոգին էականի ու խորքայինի առանցքում նոր համեմատություն է անում՝ կեղծավորի աստղի ելույթները ներկայացնելով, նաև դրան անմիջապես հետևում է հավատի ենթատեքստը, երբ հեղինակը նշում է՝ Աստված կեղծավորի աստղի լույսը խավարեց: Կյանքի օրենքներն, անքննարկելի է, որ կախված են նաև երկնային ու երկրային Տիրոջից:

«Հայրիկ, տես, տես, մյուս աստղ թռավ  
Եվ գիծ անգամ չը թողեց,  
Աստղիկն ընկավ երկնքիցը,  
Մյուս անգամ այլ չէրկեց»:  
- Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,  
Բռնակայի դա աստղ էր,  
Որ աշխարհը յուրյան գերի  
Ծնած օրից կարծել էր,

Շատ հավածանք, շատ նեղություն  
Պատճառեց նա յուր կյանքում.  
Շատ տուն բանեց, շատ մարդ գրկեց,  
Գու՞թ չունեցավ յուր սրտում:  
Եվ ահա, Նալբանդյանը գնալով ենթատեքստն ավելի է խորացնում՝ նոր ուղերձներ դնելով աստղերի ընկնելու հետ: Ազնիվ ուղեղամտությամբ հայ հոր համար նա դարձնում է անթաքույց համոզմունք, որը լույս է տալիս՝ ինչպես մշտափայլ աստղ:

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,  
Որ այնպես պարզ վառվում է,  
Նորա մաքուր պայծառ լույսը  
Չորս կողմը բակ բռնել է»:  
- Ո՛հ, իմ դստրիկ, աղոթք արա,  
Դա ծերունու մի աստղ է,  
Որ յուր կյանքում ոչինչ մարդու  
Ոչինչ վնաս տված չէ.  
Այն լուսավոր բակն է նորա  
Առաքինի գործքերը.  
Աղոթք արա, որ երկարվին  
Նորա կյանքի թելերը:

Միքայել Նալբանդյանը, լինելով ազատատեքստի մարդասեր գրող, իր տողերի հասցեականությունը կոնկրետացնում է հատկապես այս տողերում, երբ դստերն ասում է, որ ծերունին իր ողջ կյանքում մարդուն երբեք վնասած չկա, և միայն հորդորում է աղոթել ծերունու հետագա կյանքի համար:

Շատ օր անցավ, երկնքիցը  
Մի այլ վառ աստղ պակասեց.  
Ովի՞ աստղիկն էր որ ընկավ,  
Բան հարցանող չէրկեց:  
Մինչ դեռ լուսինն արծաթափայլ  
Լույս էր տալիս գիշերին,  
Խորհրդավոր մինչ տիրել էր  
Անվրդով խոր լռություն.

Մի սրտաթափ, մազերն արծակ  
Վազեց աղջիկ սգավոր  
Դեպի գեղի գերեզմանքը,  
Ծունկ չըքեց մի չիրմի մոտ:  
«Հայրիկ, աստղիկը չէ փայլում,  
Դու հավիտյան քնեցիր.  
Առ ինձ քո մոտ, քո ծոց, քո գիրկ,  
Ինչո՞ւ անտեր թողեցիր:  
Իմ աստղիկն ասա՛ նույնպես,  
Որ չը փայլի, հերիք է.  
Այս աշխարհը ինձ առանց քեզ  
Մութն ու խավար մի բանտ է»:

Արդարև, կյանքում իրարամերժ զգացումները շատ են, բայց Մ. Նալբանդյանը որպես «ազատության ճակատը բացող» գրող, իր ստեղծագործություններում մշտապես լուսավորություն է պիտում՝ կետ առ կետ ամբողջացնելով այն կարևոր երևույթները, որոնք, ինչու չէ, նաև ոչ տարրական խնդիրների ծնունդ կարող են դառնալ:

Մի մարդ չը կար, որ նկատեր,  
Որ հետևյալ գիշերին  
Պակասեցավ երկնքիցը  
Մի պայծառ աստղ խնդագին:  
Երրորդ օրը շատ սգավոր  
Փորեցին մի գերեզման,  
Ուր թաղվեցավ յուր հոր մոտին  
Մարմինը խեղճ աղջկան:  
«Հայրիկ, տես, տես, աստղը թռավ,  
Հետքից պայծառ գիծ թողեց,  
Աստղիկն ընկավ երկնքիցը,  
Մյուս անգամ այլ չէրկեց...»:

Մարդու և հողի ամուր կապի մասին նա ընտրում է յուրատեսակ պատմելու ձև, և, անկասկած, այդ ձևը դառնում է մարդկային կյանքի բանաձև և ինքնամաքրման եղանակով վերածվում բանաստեղծական տողի:

Հեղինակը ցանկանում է վստահեցնել, որ յուրաքանչյուր մարդ ունի իր աստղը, որը կյանքի ընթացքում կամ փայլում է, կամ խամրում, որը մեծապես կախված է մարդու ապրած և արարած կյանքից:

ՎԵՐՁԻՆ ԷՋ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի ապրիլի 15-ից սկսում է 2021-2022 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, 2022թ. բուհերի ընդունելության համար մասնագիտության ընտրության և ընտրած մասնագիտության համար սահմանված միասնական և ներքուհական քննությունների հայտագրման գործընթացը:

Դիմորդը ընդունելության քննություններին մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտը էլեկտրոնային եղանակով ուղարկում է՝

- Արցախի Հանրապետության ԳԹԿ «atc.nk.am@mail.ru» էլեկտրոնային փոստին, եթե ցանկանում է ընդունվել Արցախի Հանրապետության որևէ բուհ, կամ Հայաստանի Հանրապետության բուհ՝ Արցախի

Հանրապետությանը հատկացված տեղերով, և ընտրած մասնագիտության ընդունելության մրցութային քննությունները միասնական են,

- Հայաստանի Հանրապետության ԳԹԿ կայքէջ, եթե ցանկանում է ընդունվել Հայաստանի Հանրապետության բուհ՝ Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով և ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները ներքուհական են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության որևէ բուհ՝ ոչ նպատակային տեղերով:

Ընդունելության դիմում-հայտի համար անհրաժեշտ է նաև՝

- 3x4 չափսի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- ամօր հաստատող փաստաթղթի պատճենը,
- յուրաքանչյուր քննության համար փո-

խանցել 1500 դրամ՝ միասնական քննությունների համար Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության ԳԹԿ-ի 915013000145 հաշվեհամարին, ներքուհական քննությունների համար համապատասխան բուհի հաշվեհամարին, և փոխանցված գումարի անդորրագրի էլեկտրոնային տարբերակը ուղարկել դիմում-հայտի հետ:

Ընդունելության քննությունների վճարից ազատվում են՝

- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները,

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

Նշված արտոնություններից օգտվող դիմորդները համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը ուղարկում են ընդունելության դիմում-հայտի հետ:

2021-2022 ուստարվա շրջանավարտները պետական ավարտական քննությունների հայտագրման համար դիմում են իրենց ուսհաստատության տնօրենին:

Դիմում-հայտերի ընդունման վերջին ժամկետը ս. թ. մայիսի 8-ն է, ժամը՝ 18:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047)97-40-51 հեռախոսահամարին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սնանկության մասին» ԱԶ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2022թ. ապրիլի 26-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից, ԱԶ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ վաճառք՝ հետևյալ լոտերով՝

ԼՈՒՏ 1՝ Կաթսայատուն (փաստացի հացի արտադրամաս): Սեփականության վկայականի համար՝ 115352, սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը կազմում է 166,16 ք.մ, հողամասի մակերեսը կազմում է 307,0 ք.մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱԶ ք.

Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ., ք. 52/11: Մեկնարկային գին՝ 23.360.000 ՀՀ դրամ:

Լոտ2՝ Գրասենյակ: Սեփականության վկայականի համար՝ 081575, սեփականատեր՝ Արզամ Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը կազմում է 11,89 ք.մ: Վիճակը՝ միջին: Հասցե՝ ԱԶ ք. Ստեփանակերտ, Ա. Մանուկյանի փ., ք.10: Մեկնարկային գին՝ 1.152.000 ՀՀ դրամ:

Լոտ3՝ Հողամաս: Սեփականության վկայականի համար՝ 094690, սեփականատեր՝ Արզամ Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի

նկարագրությունը՝ հողամասի մակերեսը կազմում է 1410,0 ք.մ: Վիճակը՝ լավ: Հասցե՝ ԱԶ ք. Ստեփանակերտ, Ստարովոյտովա փ.: Մեկնարկային գին՝ 11.008.000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպոզիտ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպոզիտ՝ պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում,

ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00, կարող են հայտ ներկայացնել ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին: Հեռ.097-22-29-22 կամ 093-89-22-79»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՏԵՍՏԻՆԻ ՕՐԱԳՐԻՑ

Ռուսաց լեզվի դասին աշակերտը նկարպատմություն է կարդում, մոռացավ «աղվես-лиса» բառը և ասաց.

- Вот это лес, а там аղվես:

\*\*\*

Մաթեմատիկայի դասին ուսուցչուհին ստուգում էր տնային աշխատանքները: Աշակերտներից մեկը տնային աշխատանքը չէր կատարել: Ուսուցչուհու այն հարցին, թե ինչու չի կատարել, աշակերտը պատասխանեց.

- Մաման չի հասկացել:

\*\*\*

Հայոց լեզվի ժամին: Ուսուցչուհի.-Երեխաներ, կազմեք բառակապակցություն «սիրուն» բառով՝ Աշակերտ. - Սիրուն Ալբերտովնա:

\*\*\*

Ռուսաց լեզվի ժամին աշակերտները թելադրություն են գրում:

Ուսուցիչ. -Коля вытер медвеженку глаза:

Աշակերտ (լսելով вытер բառը). -Ռուսերեն «ծ» տառը հունցըն կիրում:

\*\*\*

Առաջին դասարանում մայրենիի դաս է:

Դասվար. - Մեր հայրենիքը Հայաստանն է: Կարո՞ղ եք ասել, ինչից է սկսվում հայրենիքը: Աշակերտ. - «Հ» տառից:

\*\*\*

Ուսուցիչ.- Գրի 2-ի խորանարդ:

Աշակերտը գրում է՝ 2-3 Ուսուցիչն ուղղում է սխալը: Աշակերտը վրդովված ասում է. «Կարողա՞ լուծման յրան ազդումնա»:

\*\*\*

Տիգրանը ռուսաց լեզվի ժամին քնած էր: Երբ հնչեց զանգը, քնից արթնացավ և ասաց.

-Ընկեր Գասպարյան, կարելի՞ է զնամ տուն:

- Տիգրան, ի՞նչ տարբերություն տանն ես, թե դպրոցում, միևնույն է, քնած ես:

Տիգրանը թե՛

- Բայց բոլոր ժամերին չի ստացվում քնել:

\*\*\*

Առաջին դասարանում մայրենիի դաս է: Դասվար. -Երեխաներ, «սար, սանր, կար, կին» բառաշարային գտնել ավելորդ բառը:

Աշակերտը վեր է թռչում տեղից՝ «կինը»

Դասվար. -Ինչո՞ւ:

Աշակերտ. -Որովհետև կնիկը մարդա:

\*\*\*

Դասարան է մտնում ռուսերենի նոր ուսուցչուհին:

- Ի՞նչ գեղեցիկ երեխաներ են:

Աշակերտներից մեկը կանգնում է ու գոչում.

-Вы тоже очень хорошая и красивая:

\*\*\*

Դաս է 4-րդ դասարանում:

-Переведите на русский язык՝ կրակագույն աղվես:

-Пожарная лиса,- եղավ պատասխանը:

\*\*\*

Կենսաբանության դասին: Ուսուցիչ.- Ի՞նչ ես շնչում:

Աշակերտ. -Թթվածին:

- Իսկ ի՞նչ ես արտաշնչում:

- Գազածին:

\*\*\*

Աշխարհագրության դաս է 6-րդ դասարանում:

Ուսուցիչ. -Ինչպիսի՞ն է Աֆրիկայի աշխարհագրական դիրքը:

Աշակերտ. - Վըշշի:

\*\*\*

Առաջին դասարանի աշակերտի բացակայությունից հետո:

Դասվար. - Ինչո՞ւ ես հիվանդացել, ի՞նչո՞ղ երցավում:

Աշակերտ.- Վեզ սեգրեղա ընգալ:

\*\*\*

Ուսուցչուհի. - Երեխաներ, այսօր Հայրենյաց պաշտպանի օրն է, շնորհավորում են մեր ապագա հայրենյաց պաշտպաններին, մաղթում են...

Աշակերտուհի. - Ընկեր Գրիգորյան, իսկ ես շնորհավորում են Զեր ամուսնու տոնը:

\*\*\*

4-րդ դասարան, մայրենիի դաս:

Կազմել նախադասություն «կանաչ մարգագետին» բառակապակցությամբ,-հանձնարարեց ուսուցչուհին:

Կանաչ մարգագետինը հարեցին,-գրեց Տիգրանը:

\*\*\*

\*\*\*

- Ճագարը՞ս պահում,-հարցրեց Մոսին տեսուչին:

- Չէ, Մոսի ջան:

- Խե՞, թամբալը՞ս:

\*\*\*

- Ենի ածանցով բառ ասեք:

- Վարենի,-պատասխանեց աշակերտը:

\*\*\*

8-րդ դասարան, ռուսաց լեզվի ժամ:

Պատմվածքի հերոսը երագում է դառնալ թռչուն, որպեսզի դաս չսովորի:

Հաղորդից տեղահանված Վիգենը՝ տեղից. «Ես էլ շատ կուզեի թռչուն դառնալ, թռչեի Հաղորթ, հետ վերադառնալ ու նորից մարդ դառնալ:

(Շատ հուզիչ է):

Հավաքե՛ք ԱՅ ԿԳՄՆ ԿՊՏ փեսուջ Սուսաննա ՀՈՎՍԵԹՅԱՆԸ

ԿՈՐԵԼ Է Արևիկ Սարոյի Հակոբյանի (անձնագրով՝ Գասպարյան, ծնված՝ 29.04.1995թ., Հայրուրթի շրջան, գ. Տունի, անձնագիր՝ AN 0646119) միջնակարգ դպրոցի ատեստատը՝ տրված Տունու միջնակարգ դպրոցից 2013 թվականին: Համարել անվավեր

ՀԻՄՆԱԳԻՐ «ԼՈՒՍԱՐԱՐ» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 02.04.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: